

ԱՅՍ ԹԻՒՈՎ

Ներդիր յաւելում՝
«Հորիզոն»ի գրական
յաւելում

Ներդիր յաւելում՝
Լուսաւորիչ եկեղեցիւն տան
մէջ

Մոնթրէալահայ Յարութիւն
Ծիրիլեան Ահուհի-
Գարթիւրվիլ շրջանի քա-
ղաքապետի թեկնածու, էջ 5

Դպիրներու եւ Սարկաւագ-
ներու սեմինար, էջ 5

Հոգ. Տ. Գարեգին Վրդ.
Ծիրարմեանի Անդրանիկ
Պատարագը Վանգուվրի

Անփոխարինելի, էջ 6

Քուռկիկ Ջալալին եւ Թուր
կէծակին, էջ 7

Կիլիկիոյ
Կաթողիկոսութեան Սիւս
Անթիլիաս Փոխադրութիւնը,
էջ 8

CAMAM

3401, Olivar-Asselin
Montréal (Qc) H4J 1L5

397, Boul. des Prairies
Laval (Qc) H7N 2W6

45 Hallcrown Place
Willowdale ON M2J 4Y4

ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան 45-րդ Պատգամաւորական Ժողովի Հաղորդագրութիւն

12-13 Օգոստոս 2017-ին, Լաւալի Հայ Կեդրոնի «Պարոնեան» սրահէն ներս տեղի ունեցաւ ՀՅԴ ԳԵՄ-ի (Գանատայի Երիտասարդական Միութիւն) 45-րդ Պատգամաւորական Ժողովը: Ժողովին ներկայ կը գտնուէին ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան անդամները եւ Օնթարիոյի, Քեպէկի եւ զանազան շրջաններէն ժամանած 29 պատգամաւորներ: Ժողովին նաեւ իրենց մասնակցութիւնը բերին ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի, Մոնթրէալի ՀՅԴ «Միհրան Փափագեան» կոմիտէի, Լաւալի ՀՅԴ «Սարգիս Զէյթիեան» կոմիտէի, ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան Վարիչ Մարմնի, ՀՄԸՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան եւ ուղեկից այլ միութեանց ներկայացուցիչները:

Երկօրեայ ժողովի ընթացքին, ժողովականները մանրամասնօրէն քննարկեցին եւ արժեւորեցին միութեան անցնող տարեշրջանի բազմաշերտ գործունէութիւնը ու ճշդեցին միութեան յառաջիկայ տարեշրջանի ծրագրերն ու նպատակները:

Պատգամաւորական Ժողովի քննարկման գլխաւոր նիւթերն էին ԳԵՄ-ի կազմակերպած Վանաձորի Ամառնային Ճամբարը, «Արծիւ» պաշտօնակազմի հրատարակութիւնը, Հայ Դատի վերաբերեալ ԳԵՄ-ի քաղաքական եւ դաստիարակչական գործունէութիւնը, գաղութի երիտասարդութեան քաղաքականացումը - քարոզչութեան համար գիտարուեստի կապակցութեամբ միութեան ռազմավարութիւնը:

Ժողովը հաստատեց, որ հակառակ այն իրողութեան, որ ԳԵՄ-ը կը դիմագրաւէ շարք մը մարտահրաւէրներ, միութեան ընդհանուր գործունէութիւնը կը շարունակէ արձանագրել աճ ու վերելք, որ իր կարգին կ'արժանանայ համայնքի բարձր գնահատանքին ու ակնածանքին:

Ժողովը հաստատեց, որ հայրենիքի մէջ միութեան իրագործած գլխաւոր ծրագրերն է Վանաձորի ամառնային դաստիարակչական Ճամբարը, որ կը համախմբէ եւ կը դաստիարակէ երեք հարիւրէ աւելի պատանիներ, որոնք ազգային-կուսակցական դաստիարակութեան կողքին կը ստանան անգլերէնի, Հայոց պատմութեան եւ համակարգիչի դասըն-



թացքներ միութեան կամաւորներուն կողմէ: Նկատի ունենալով անցնող եօթը տարիներու ընթացքին ճամբարի արձանագրած նուաճումները, ժողովը քննարկեց եւ առաջադրեց ընդլայնել ճամբարի ծրագիրը:

Քարոզչական գեանի վրայ «Արծիւ» պաշտօնակազմը գանատահայ երիտասարդութեան աւելի հասանելի դարձնելու համար՝ ժողովը թերթը տարածելու եւ սփռելու նոր միջոցներ որդեգրելու առաջարկներ կատարեց: Միութեան քաղաքական ծրագրին

գծով, ժողովը առաջարկներ կատարեց Արցախեան հիմնահարցի առնչութեամբ եւ որոշեց ամրապնդել միութեան նիւթաբարոյական ճակատութիւնը Արցախեան Ազատամարտիկներու Ֆոնտին եւ շարք մը այլ ծրագրերով:

Երկօրեայ նիստերու աւարտին, ժողովը ընտրեց 2017-2018 տարեշրջանի ՀՅԴ ԳԵՄ-ի Կեդրոնական Վարչութեան նոր կազմը:

ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան 45-րդ Պատգամաւորական Ժողով

Մոնթրէալահայ Յարութիւն Ծիրիլեան Ահուհի-Գարթիւրվիլ շրջանի քաղաքապետի թեկնածու



Կարդալ էջ 5

2017
CR-V
STARTING FROM
\$26,890*



Image for illustration purposes only.

HONDA
GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4
514 327-7777
www.hondagabriel.com
◀ OPEN SATURDAYS ▶

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobasarian



HONDA

*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.



MARCHÉ
ADONIS

Un univers de fraîcheur



Donnez une touche
méditerranéenne
à vos BBQ en famille !

*Give a mediterranean touch
to your BBQ with the family!*

www.groupeadonis.ca

Suivez-nous



COME HEAR WHAT YOU HAVE BEEN MISSING



**TRY HEARING AIDS
RISK-FREE**

Call 416 754-4327

699 Coxwell Avenue
Toronto, ON M4C 3C1
Tel: 416 463-4327(HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Road,
#65 Toronto, ON, M1R 4B9
Tel: 416 754-4327(HEAR)

www.hearingaidsource.ca



- Free Hearing Tests
- No obligation Hearing Aid Trial
- Hearing Protection

Images copyright Oticon Canada Ltd.



hearing aid source

invisible, custom & comfortable

Հայ մնալու բանաձևը՝ ըստ գանատահայ երիտասարդների... Համագրայիցի ֆորումի մասնակիցները Հայաստանի մեջ

Մոնթրեալ, Երեւան (Նորանոր) — Համագրայի հայ կրթական եւ մշակութային միությունը հերթական ուսանողական ֆորումը կը կազմակերպէ Հայաստանի մէջ, որուն մասնակցելու համար Հայաստան ժամանած են աւելի քան 3 տասնեակ երիտասարդներ աշխարհի տարբեր երկրներէն: Անոնք ճանաչողական այցելութիւններ կու տան Հայաստանի տարբեր պատմամշակութային վայրեր, կը ծանօթանան Հայաստանի պատմութեան, հանդիպումներ կ'ունենան մշակոյթի եւ արուեստի օճախներու սաներու հետ, իսկ օրուան աւարտին կը շրջին մայրաքաղաք Երեւանի մէջ:

Հայաստան եկած ուսանողներէն են նաեւ Գանատայի Մոնթրեալ քաղաքի երիտասարդները, որոնց հետ հանդիպելու զրուցելու է «Նորանոր» կայքը:

Անոնք պատմեր են այցելութեան, Հայաստանէն ստացած տպաւորութիւններու մասին, համեմատականներ կատարած են իրենց հայրենիքին ու Գանատայի միջեւ:

Սովորաբար սփռուքահայ երիտասարդները կը տպաւորուին հայրենիքի ջերմ ու մտերմիկ միջավայրով, կը հիանան լեռնային բնութեամբ ու պատմական վայրերով, իսկ զգացմունքային կապերով երկրին կապուած ըլլալով՝ չեն նկատեր որեւէ բացասական երեւոյթ:

Այս երիտասարդները կը դժուարանան նաեւ այն, ինչը փոխուած կ'ուզէին տեսնել Հայաստանի մէջ, սիրով կը խօսին ամէն ինչի մասին: Թերեւս այցելութիւններուն կարճատեւ ժամկէտն ու միայն տեսարժան ու հետաքրքիր վայրերու հետ ծանօթութիւնն է պատճառը, բայց երիտասարդները գոհ կը վերագրուին հայրենիքէն եւ կը ցանկան կրկին այցելել, ինչու չէ, գուցէ յետագային մշտական բնակելու մտադրութիւն ալ ունենան:

ԳԱՆԱՏԱՅԻ ՈՐԱԿԵԱԼ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Ֆորումին մասնակցելու համար Հայաստան եկած 4 երիտասարդներն ալ այժմ կ'ուսանին Գանատա: Որակեալ ուսումը, ըստ իրենց, Գանատայի կարեւոր առաւելութիւններէն է: Մեկնելու թաշտեանը, որ յաճախած է հայկական դպրոց ու աշխոյժ մասնակցութիւն ունեցած է գաղութին կեանքին, կը շեշտէ. «Շատ աղուոր դպրոցներ ունի Գանատան, խենթանալիք են համալսարանները, ուրախ եմ, որ այդ համալսարաններուն մաս կը կազմեն, Գանատայի տիպով ունենալը յարգելի է, կեանքը դիւրին է», եւ կը նշէ, որ այս իրավիճակին քիչ երիտասարդներ կը գտնուին, որոնք կը համաձայնին թողել որակեալ կրթութիւնն ու

գալ Հայաստան: «Հիմա շատ շուտ է այսպիսի բանի մը մասին մտածելու, բայց կարելի է, երբ որ ուսումս վերջացնեմ եւ հաստատ կեանք մը ունենամ, կարծեմ Հայաստան ապրիլը շատ կարելի է, բայց պէտք է այդ մասին երկար մտածել», կը հաստատէ Մելանին:

Ան կը կարծէ, որ իւրաքանչիւր այցով սփռուքահայերը նորովի կը բացայայտեն Հայաստանը, իր այս այցն ալ կը տարբերէր նախորդէն: «Առաջին անգամ շատ մօտիկ զգացի ամէն մարդու, որ բնաւ չէ եղած ասիկէ առաջ, այդքան հայութիւն չէի տեսած, շատ սիրեցի Երեւանը եւ շատ մօտիկ զգացի երկրին, ինչ որ Գանատա չէի զգացած»:

«ԿԱՅԾԵՐ»-ՈՒՆ ԿՐԱԿԸ ՊԻՏԻ ԱՐԹՆԱՅ

«Ես հիմա Մոնթրեալ վարժուած եմ, հոն կ'ուսանիմ, դժուար կ'ըլլայ հոն ձգել եւ գալ Հայաստան, բայց անպայման մեծնալէ եւ գործի մեջ աւելի խորը մտնելէ ետք պիտի օգտակար դառնանք մեր հայրենիքին, երկրաչափ կ'ուզեմ դառնալ, կ'ուզեմ հոս գալ եւ հոս շէնքեր կառուցել եւ միշտ հայրենիքիս ծառայել», վստահօրէն կը նշէ 17-ամեայ Հրակ Գրեկիչեանը:

Ան կը կարծէ, որ բոլոր հայերուն պարտքն է, եթէ ոչ ապրիլ, ապա գոնէ օգտակար դառնալ հայրենիքին: Հայաստան իր երկու այցելութիւններուն ընթացքին հասկցեր է, որ հայաստանցիներու հետ սփռուքահայերը շատ ընդհանրութիւններ ունին: Երբ ամէն երեկոյ անոնք հնարաւորութիւն կ'ունենան զբօսնելու քաղաքին մէջ, այդպիսով աւելի կը համոզուին:

«Նոյն մտածումը ունինք, միայն կարգ մը բառեր կան, որոնք մեզի համար տարբեր են, կը փորձենք ձեր կեանքին վարժուիլ, աղուոր է կեանքը, այստեղ աւելի ոչ թէ պարզ, այլ աւելի ընկերային է: Մեր քով, այո՛, ընկերներս հայ են, բայց միջավայրին մէջ ամէն մարդ օտար է, հոս ամէն մարդ հայերէն կը խօսի, մօտեցում կայ, մտերմութիւն կայ», կը ներկայացնէ երիտասարդը իր տպաւորութիւնները, գորս ստացած է միայն մայրաքաղաքին մէջ, ան կը կարծէ, որ Հայաստանի այլ քաղաքներուն մէջ ապրելակերպը տարբեր է, դժուարութիւնները՝ շատ:

Այս ամէնը հաշուի առնելով՝ ան կը նշէ, որ հայը պէտք է սատար կանգնի իր հայրենակիցին, իսկ ձուլման սպառնալիքը՝ կանխուի, այս հարցին ինք անձամբ պատրաստ է նպաստելու:

«Իմ ընտանիքս բոլորովին դէմ է օտարի հետ ամուսնանալու, ես ալ այդպէս կը զգամ, որովհետեւ պարտակա-



նութիւն ունինք հայութիւնը շատցնելու, որովհետեւ շատ չենք աշխարհի վրայ, ոչ մէկը կը դատապարտեմ, բայց ես, իբր Հրակ, այդպէս կը կարծեմ», կը նշէ ապագայ երկրաչափը:

Ֆորումը հնարաւորութիւն տուած է իրեն եւ միւսներուն աւելի լաւ ճանչնալ հայրենիքն ու հասկնալ խնդիրները, ան կ'ակնկալէ. «Կը կարծեմ, որ հայութիւնս աւելի պիտի զօրանայ ֆորումին հետ, նոր բաներ կը սորվիմ հայրենիքիս մասին, եւ Բաֆֆիի «Կայծեր» գիրքին մէջ նշուած կրակը պիտի արթննայ նաեւ մեր մէջ, կ'ուզեմ մեր Գանատայի հայ երիտասարդներուն մէջ ալ այդ կրակը արթնցնել»:

Մոնթրեալահայ Արշէն Քեասպերը եւս կը ձգտի հայրենասիրութեան կրակը արթնցնել, բայց առաջին հերթին իր մէջ, ան, ի տարբերութիւն միւսներէն, հայկական դպրոց չէ յաճախած, հիմա կը փորձէ այդ բացը լրացնել. «Հայաստանը հայրենիքս է, ես հայկական դպրոց չեմ գացած, կ'ուզեմ քիչ մը կապուիլ Հայաստանի, կը սիրեմ, զգացում կ'ունենամ, որ հայ եմ, Մոնթրեալ ապրած եմ, ուր կան հայկական դպրոցներ, բայց ֆրանսական դպրոց գացած եմ, կը կարծէիք, որ ֆրանսական դպրոցները աւելի լաւ են, քան թէ հայկական դպրոցները»:

ԼԵՌՆԱՅԻՆ ԲՆՈՒԹԻՒՆԸ

Գանատայի մէջ հայկական դպրոցը հաւանաբար կը գիջի ֆրանսականին, բայց Հայաստանի բնութիւնը անգերազանցելի է Գանատայի համեմատ, կը

կարծէ Արշէնը, որ հիացած ու տպաւորուած է լեռնային հայրենիքով:

«Ես շատ կը սիրեմ բնութիւնը, լեռները, կը սիրեմ պտուղ լեռներու մէջ, պատմական տեղեր երթալ, պատմութեան ծանօթանալ, Հայաստանը շատ լաւ տեղ է, զգացումներ կ'արթննան մէջը, կը հիանաս, շատ գեղեցիկ է, շատ կը սիրեմ», կը պատմէ երիտասարդը, որ եւս երկրորդ անգամն է, որ կ'այցելէ հայրենիք:

ՀԱՅ ՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

«Շատ աղուոր բնութիւն կայ, շատ գեղեցիկ երկիր մը ունինք, լեռնային, որ, ըստ իս, ամէն մարդ գոնէ մէկ անգամ պէտք է եկած ըլլայ, որ տեսնէ մեր հայրենիքը, եւ իբր պարտականութիւն պէտք է ամէն հայ հոս գայ», նոյն կարծիքին է նաեւ 18-ամեայ Թամար Տեմիրճեանը, որ կը կարծէ, որ հայրենիքը ճանչնալու համար նմանատիպ այցելութիւնները Հայաստան բաւարար են, բայց հայ մնալու համար՝ ոչ:

«Որպէսզի հայութիւնը պահպանուի, պէտք է նախ խօսիլ հայերէն, կարգալ հայկական գիրքեր կամ մշակութային կազմակերպութիւններու մաս կազմել, շփուիլ հայ մարդոց հետ», կը թուարկէ ապագայ հոգեբանը, որ որպէս թերութիւն կը խօսի հայաստանցիներուն ոչ բարուք պայմաններուն մասին, թէ եւ ընկերային դժուարութիւնները նկատելի չեն մարդոց դէմքերուն ու վարուելակերպին, որոնց հետ յաջողած է շփուիլ:

ՎԱՐԴՈՒՇԻ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

ALINE BEKEREJIAN
NOTAIRE • NOTARY
ՆՈՏԱՐ ԱԼԻՆ ԳԵՔԵՐԵՃԵԱՆ

Achat	Ստեւար	Purchase
Hypothèque	Անշարժ Կալուածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսատրում	Refinance
Mandat	Պատուիր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կալուածք	Estate
Marriage	Սնուամուսն	Marriage
Procuratation	Փոխակորուպի	Power of Attorney


180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Շատալոյթիւնները կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Ֆրանսերէն, Եւ Սլաւերէն լեզուներով:

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais
Services offered in Arabic, Armenian, French and English.

 Այցելեցեք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կայքէջը՝ www.sourphagop.org

 Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ **(514) 284-7676**

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼՍԻՊԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ
PERMIS DE QUÉBEC
3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

Մոնթրէալահայ Յարութիւն Գործակալութեան Ահունցիք-Գարթիէրվիլ շրջանի քաղաքապետի թեկնածու

Չորեքշաբթի 9 Օգոստոս 2017-ին, Մոնթրէալի քաղաքապետ Denis Coderre մամուլի հաղորդագրութեամբ մը յայտարարեց պր. Յարութիւն Գործակալութեան թեկնածու թեկնածու իբրև քաղաքապետ՝ Ahuntsic-Cartierville շրջանին մէջ, որու ընտրութիւնները տեղի պիտի ունենան 5 Նոյեմբեր 2017-ին:

«2009 թուականէն ի վեր երիտասարդ Յարութիւն Գործակալութեան ընտրուած է քաղաքապետարանի խորհուրդի անդամ Bordeaux-Cartierville շրջանին մէջ: Իր նուիրումով եւ գործակցութեամբ տեղական զանազան կազմակերպութիւններու եւ անձնաւորութեանց հետ, ան վերջին տարիներուն առաջնորդի դերը ստանձնելով, յաջողած է շրջանին մէջ իրագործել բազմաթիւ կարեւոր ծրագրեր, ինչպէս՝ Laurentien/Lachapelle/Gouin ծառուղիներու վերակազմակերպումն ու վերածաղկեցումը եւ շրջանի ապահովութեան նպատակով շինարարական աշխատանքները, Bois-de-Saraguay անտառի զարգացման ուղղուած աշխատանքները, Cartierville շրջանի ապագայ մշակութային եւ համայնքային կեդրոնի շէնքի գնումը եւ անոր զարգացման ծրագրերը:

Շրջանի բնակիչները կը գնահատեն Յարութիւն Գործակալութեան աշխատանքն ու անոր գործերու դրական ազդեցութիւնը:

Վստահ եմ, որ Յարութիւն Գործակալութեան թեկնածու թեկնածու իբրև քաղաքապետ Denis Coderre:

Յարութիւն Գործակալութեան փոխ-ատենապետն է Մոնթրէալի քաղաքապետարանի Գործակալ Մարմինն ու պատասխանատուն՝ վարչական բարենորոգումներու, երիտասարդութեան եւ «Ville intelligente» ծրագրին:

Յարութիւն Գործակալութեան 2009-ին, 29 տարեկանին մտած է քաղաքական ասպարէզ: 2011-ին նշանակուեցաւ քաղաքապետարանի խորհուրդի նախագահ, դառնալով Մոնթրէալի պատմութեան մէջ ամենէն երիտասարդ քաղաքապետարանի խորհուրդի նախագահը:

«Մեծ պատիւ է ինձի համար ներկայանալ որպէս Ahuntsic-Cartierville շրջանի քաղաքապետի թեկնածու: Շրջան մը՝ որ մօտիկ է սրտիս ու պատիւն ունիմ ներկայացնելու զայն արդէն 8 տարիներէ ի վեր իբրև խորհրդակցական: Հիմնուելով համագործակցութեան եւ փոխ-հասկացողութեան արժէքներու վրայ, կը փափաքեմ նուիրուիլ շրջանի բնակիչներու բարեկեցութիւնը ապահովող ու կարիքները գոհացնող հաւաքական ծրագրերուն իրականացման աշխատանքին»:- յայտարարեց պր. Յարութիւն Գործակալութեան:

Դպիրներու եւ Սարկաւագներու սեմինար



Հովանաւորութեամբ Գերաշնորհ Տ. Բարգէն Արք. Չարեանի, Շաբաթ, 19 Օգոստոս 2017-ին, տեղի ունեցաւ Գանատայի Հայոց Թեմի Ս. Յակոբ եւ Ս. Գէորգ եկեղեցիներու դպիրներու եւ Սարկաւագներու սեմինարը՝ Առաջնորդարանի Դահլիճէն ներս, նուիրուած «Վերանորոգման Տարի»ին:

Հոգ. Տ. Գարեգին Վրդ. Ծիրտըմեանի Անդրանիկ Պատարագը Վանգուվրի մէջ



Կիրակի, 13 Օգոստոս 2017-ին, ըստ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ սօնացոյցին, որ կը յուշէ «Վերափոխումն Ս. Աստուածածնի», Վանգուվրի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ Ս. եւ Անմահ Պատարագ մատուցեց գաղութիս նոր Հոգեւոր Հովիւ՝ Հոգ. Տ. Գարեգին Վրդ. Ծիրտըմեանը:

Պատարագի ընթացքին խուռներամ հաւատացեալներու ներկայութեան կատարուեցաւ խաղողի օրհնութեան արարողութիւնը, որմէ ետք Հայր սուրբը փոխանցեց օրուան պատգամը բացատրելով խաղողօրհնէքի արարողութեան նշանակութիւնը եւ անոր այժմեականութիւնը մեր քրիստոնէական կեանքին մէջ:

Մեղրիկ Սիւլահեան Չափանեան

Այցելեցեք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցեք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը
HITUNES.CA

Ունկնդրեցեք triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամեն հիւզաբոթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցեք շահեկան հարցազրոյցներ
TRIKTRAK.CA

«ԲԱՍՏՐՄԱՃԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-Ի ԿՐԹԱԹՈՇԱԿ

PASDERMAJIAN FOUNDATION SCHOLARSHIP FONDATION PASDERMAJIAN BOURSE D'ÉTUDES

«Բաստրմաճեան Հիմնադրամ»-ի 2017-2018 ուսումնական տարեշրջանի համալսարանական կրթաթոշակի դիմումագրերը պիտի ընդունուին մինչեւ՝ 1 Նոյեմբեր 2017

Թեկնածուն պարտի ըլլալ՝

- Համալսարանական ուսանող՝ Պսակաւոր, Մագիստրոս կամ Դոկտորական աստիճանի:
- Յաջող իր ուսումնական արդիւնքներուն մէջ եւ գործունէայ տեղական եւ ի մասնաւորի հայկական կազմակերպութիւններէ եւ միութիւններէ ներս:
- Շրջանաւարտ՝ Մեծն Մոնթրէալի մէջ գործող հայկական երկրորդական վարժարանէ մը: Եթէ վարժարանը այդ ուսումնական տարեշրջանի ընթացքին երկրորդական 5րդ կարգ չունի, ուրեմն տուեալ վարժարանի բարձրագոյն կարգի աշակերտները՝ շրջանաւարտ կը նկատուին:

Բարեհաճեցէ՛ք 2017-2018 տարեշրջանի դիմումագրերը պատուիրել կապուելով հետեւեալ է-նամակի հասցէին՝ pasdermajian.scholarship@gmail.com

Նկատի պիտի առնուին միայն լրիւ ամբողջացած եւ է-նամակով ուղարկուած դիմումագրերը, պահանջուած փաստաթուղթերով:

Անփոխարինելի

ՀՅԴ Լաւալի «Սարգիս Զէյթլեան» կոմիտէու-թիւնը շուտով պիտի նշէ իր հիմնադրման 25-ամեակը: Այս առիթով կը հրատարակենք ընկ. Սարգիս Զէյթլեանի գրիչին պատկանող եւ «Դրօշակ»ի ԺԲ. Տարի, 1981, թիւ 21-ին մէջ հրատարակուած խմբագրականը:

Հայութիւնը ամէն ինչ ունի Արտերկրի մէջ, առնուազն ամէն ինչ ունենալու հնարաւորութիւնը ունի, սակայն այդ «ամէն ինչ»ը ո՛չ մէկ արժէք կը ներկայացնէ ազգային տեսակէտէն, այնքան ատեն որ անոր կը պակասի հիմնականը՝ Հայրենի հողը:

Առանց Հայրենի հողի, առանց սեփական Հայրենիքի մեր ամէն ինչը աւազի եւ փոշիի կը վերածուի ի վերջոյ: Մեզի չեն մնար ոչ միայն աշխարհ մը քրտինքով ու տաղանդով կուտակուած իմացական, բարոյական եւ նիւթական անասման հարստութիւնները, այլեւ նոյնինքն մեր արեան ու էութեան ծնունդը յաջորդող սերունդները, մեր գաւազներն ու թոռները:

Ամէն ինչ ոչինչի կը վերածուի առանց Հայրենի հողի, որ անփոխարինելի պատուանդանը, կենաց աղբիւրը կը կազմէ ազգային ամէն հաւաքականութեան:

Այս տարրական ճշմարտութեան գիտակցութիւնը ունի, անշուշտ, ամէն հայ: Եւ այդ գիտակցութեան վրայ խարսխուած է արդէն գոյատեւման եւ ազատագրական մեր պայքարը տասնամեակներէ ի վեր:

Էականը սակայն ա՛յս տարրական ճշմարտութեան գիտակցութիւնը չէ, ո՛րքան ալ հիմնական ըլլայ անոր կարեւորութիւնը: Էականը լրացուցիչ եւ կեցուցիչ միւս տարրական ճշմարտութեան (կամ ճշմարտութեանց) գիտակցութիւնն է:

Այսինքն ա՛յն գիտակցութիւնը, որուն մղումին տակ ազգը, իր բոլոր խաւերով ու հոսանքներով, իր «ամէն ինչ»ը յօժարակամ ու անսակարկ ի սպաս կը դնէ անփոխարինելի նուաճումին, մեր պարագային՝ միացեալ ու ամբողջական Հայրենիքի կերտումին:

Ամէն ինչ զոհաբերելու այս գիտակցութիւնը, մանաւանդ այս յօժարակամութիւնն է, որով իմաստ ու արժէք կը ստանան Հայութեան կուտակած բոլոր հարստութիւնները՝ մարդկային, իմացական, բարոյական թէ նիւթական՝ եւ կը վերածուին հաւաքական մնացուցիչ գրամագլուխի, կեանքի եւ կենսունակութեան աղբիւրի:

Բոլորանուէր եւ յարատեւ այս զոհաբերութեան միջոցով է, որ ազգային ազատագրական մեր պայքարի ճանապարհին, Հայութիւնը պիտի յաջողի նուաճել իր գոյութեան ու բնականոն զարգացման նախապայմանը,՝ Հայրենի հողը, իբրեւ հաւաքական մեր փրկութեան ամէնէն վաւերական գրաւական:

Եւ այս ճանապարհին վրայ ինչ որ կու տանք, ինչ որ կը զոհաբերենք, այն միայն կը մնայ մեզի: Աւելի՛ն. այս ճանապարհին վրայ ամէն «խնայողութիւն» մտնում է պարզապէս, անհատական թէ հաւաքական ուժերու զուտ վատնում է լոկ եւ ազգային տեսակէտէն



աններելի եւ անթոյլատրելի պարտագանցութիւն է ստակ:

Ամէնէն իմաստուն եւ ամէնէն արդիւնաւոր ներդրումը Հայրենակերտման այս պայքարին մէջ է եւ այս պայքարին միջոցով է միայն որ ամէն ներդրում, ամէն զոհաբերում, ինչ որ կու տանք վերջապէս, հարեւրապատիկ կը վերադառնայ, մեզի, իբրեւ ընդհանրական անմատչելի հարստութիւն:

Մնաց որ ինչ որ կու տանք, ինչ որ կը զոհաբերենք Հայրենական մեր հողերու նուաճման կամքով, այնքանին միայն արժանի կրնանք ըլլալ անհատապէս եւ հաւաքաբար, ընդհանուր ազգաց կենդանի պատմութիւնը վկայ:

Հայրենի հողը, Հայրենիքները, ինչ խօսք, ճրի չեն տրուիր, այլ կը կերտուին քրտինքով, արիւնով, տաղանդով, սերունդներու վաստակով, յարատեւ զոհաբերութեամբ եւ պայքարով:

Եթէ ազգերու կեանքին մէջ ամէնէն թանկագին գործօնը, յաւերժութեան ու ինքնաիրազործման պատուանդանը Հայրենիքն է, ապա Հայրենիքները կը կերտուին եւ կը պահպանուին ամէնէն թանկագին բաներու զոհաբերման գնով միայն:

Բոլոր պայմաններուն մէջ, Հայրենիք ունենալու, Հայրենիք կերտելու, Հայրենանալու ուրիշ միջոց կամ ճանապարհ չկայ: Այլ ճանապարհներով ձեռք բերուած «Հայրենիք»ները Հայրենիք չեն (չեն կրնար ըլլալ), այլ աշխարհագրական հասկացողութիւն, հողային սոսկական տարածութիւն են պարզապէս, ուր... ոչինչ կը բուսնի սակայն, եթէ բա՛ն մը բուսնի անգամ, չ'ապրիր,

չի տեւեր, չ'ոգեղինանար, սեփական նկարագիր ու գրոշմ չի զգենուր մանաւանդ:

Հայրենիքն է այն բնական միջավայրը, ուր ազգերը սեփական դիմագիծ, սեփական նկարագիր, սեփական մշակոյթ, ինքնութիւն եւ ինքնուրոյնութիւն կը կերտեն եւ այդ ճամբով միայն իրենց արժանավայել մասնակցութիւնը կը բերեն թէ՛ մարդկային եւ թէ՛ համամարդկային մշակոյթի ու քաղաքականութեան զարգացման:

Սեփական Հայրենիքի երազով կամ սեփական Հայրենիքի միջոցով է, որ ազգերը կը զարգացնեն միաժամանակ իրենց քաղաքական դիմագիծը եւ քաղաքական ինքնուրոյն մտածողութիւնը: Հայրենիքի գաղափարը կամ սեփական Հայրենիքի կենդանի իրականութիւնն է խարսխը նաեւ անկախութեան գաղափարին:

Ուրիշ խօսքով՝ ազգային ամէն հաւաքականութեան գոյատեւման, ազգային հաւաքական ամէն անհատականութեան կերտման, ինչպէս նաեւ ազգային եւ ընկերային ամբողջական ազտագրութեան հիմնախարսխը Հայրենիքն է:

Ահա թէ ինչու կը կրկնենք յաճախ, — Հայրենիքէն դուրս՝ չիք փրկուելու ո՛րեւէ ազգի, բայց առանձնապէս Արտերկրի աշխարհացրիւ Հայութեան համար:

Քաղաքական առողջ մտածողութեան տէր բոլոր ազգերը, ազգային ազատագրական հասուն բոլոր շարժումներն ու պայքարները ուրիշ մտասեւեռում չունին, բայց եթէ միայն սեփական եւ անկախ Հայրենիքի կերտումը, իբրեւ մարդ անհատի եւ ազգային հաւաքականութեանց ազատ զարգացման ամրակուռ պատուանդան եւ բնական կենարար միջավայր:

Ճիշդ այս պատճառով ալ բովանդակ մարդկութեան դէմ ոճիրներուն մեծագո՛յնը ազգերուն Հայրենագրկումն է: Եւ, ընդհակառակն, մարդկային առաքինութեանց կամ սխրագործութեանց մեծագոյնը Հայրենակերտումն է, յարատեւ Հայրենացումը:

Այս իմացումով է, նաեւ, որ Հայկական Յեղափոխութիւնը, իբրեւ Հայութեան եւ մարդկութեան դէմ գործուած Ոճիր, կրկնակիորէն ծանրակշիռ բնոյթ ու տարողութիւն ունի, որովհետեւ թրքական ցեղապաշտ ու բարբարոս վերնախաւը, պետական ծրագրութեամբ ու գործարկութեամբ, Հայութեան համրանքին կէսը, շուրջ երկու միլիոն մարդ, ոչնչացնելէ ետք, մեզմէ բռնորէն խլեց միաժամանակ մեր ժողովուրդի գերագոյն հարստութիւնը, հարստութեանց ամէնէն թանկագինը՝ Հայոց Հայրենիքի շուրջ չորս-հինգերորդ մասը:

Այս կրկնակ Ոճիրին դէմ է, որ ծառայած է եւ անհասարկ պայքարի լծուած է բովանդակ Հայութիւնը, աշխարհի բոլոր գոտիներուն մէջ:


Արդար եւ անյողողող ծառայում մը, որ կենաց մահու հարց է եւ ճակատագրական նշանակութիւն ունի ո՛չ միայն Հայութեան, այլեւ բախտակից բոլոր ժողովուրդներուն, բովանդակ յառաջագէմ մարդկութեան համար:

Արդ, եթէ ամէն ինչ ունենալու նախապայմանը Հայրենի հողի, Հայրենիքի՝ նուաճումն է, ապա Հայրենիք ունենալու, Հայրենական մեր հինգհազարամեայ հողերը վերանուաճելու հիմնական նախապայմանը հայութեան կողմէ իր ամէն ինչը զոհաբերելու գիտակցութիւնը, յօժարակամ վճռականութիւնն է, յեղափոխական կա՛մքը:


Անփոխարինելի նուաճելու փոխարինելի ուրիշ ուղի, ուրիշ ռազմավարութիւն չկայ, բացի առաւելագոյն, ի հարկին նաեւ՝ գերագոյն զոհաբերութեան ուղիէն:

ՍԱՐԳԻՍ ԶԷՅԹԼԵԱՆ

Այս իմացումով է, նաեւ, որ Հայկական Յեղափոխութիւնը, իբրեւ հայութեան եւ մարդկութեան դէմ գործուած Ոճիր, կրկնակիորէն ծանրակշիռ բնոյթ ու փարոզութիւն ունի, որովհետեւ թրքական ցեղապաշտ ու բարբարոս վերնախաւը, պետական ծրագրութեամբ ու գործարկութեամբ, հայութեան համրանքին կէսը, շուրջ երկու միլիոն մարդ, ոչնչացնելէ ետք, մեզմէ բռնորէն խլեց միաժամանակ մեր ժողովուրդի գերագոյն հարստութիւնը, հարստութեանց ամէնէն թանկագինը՝ հայոց հայրենիքի շուրջ չորս-հինգերորդ մասը:



Հ.Յ.Դ.
ՍԱՐԳԻՍ ԶԷՅԹԼԵԱՆ
ԿՈՄԻՏԵՆՈՒԹԵԱՆ
25-ԱՄԵՆԱԿ
1992-2017



ANI

Ristorante

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5



www.aniristorante.ca

*Fine Dining
Catering
Party Room*
FOR UP TO 100 PEOPLE

Armenian Community Centre of Cambridge Presents

**ԽԱԶՎԵՐԱՅԻ ԱՄՈՒՍԱ-ԼԵՐԱՆ
ՔԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ**

**Armenian Heritage
Celebration**



**Elie Berberian
& His Band**

9 & 10

Սեպտ. / Sept.



Saturday September 9th, 2017 | Price: \$25

| Kids 5-10 Years Old - Price: 10\$

- Շարձք Մատաղորինեք ժամը 6-ին
- Խրախճանք ժամը 8-ին

Sunday September 10, 2017 | FREE Entrance

- Կիրակի Պատարագ ժամը 11-ին
- Քերիսալի Օրինություն ժամը 1-ին

**Հաճելի Մթնոլորտ, Աանդական Տաուլ Հուրնա,
Համադամ Ճաշեր, Փոքրերու Խաղավայր**

For Hotel Reservations Call:
Cambridge Hotel | 700 Hespeler Rd. | Cambridge, ON | (519) 622-1605 | Discount code: ACC

www.armenianccofcambridge.org

15 International Village Dr., Cambridge

CASSANDRA HEALTH CENTRE

Rexall I.D.A. CASSANDRA PHARMACY

CASSANDRA CLINIC WALK-IN & FAMILY PRACTICE
416.331.9111

Dr. Marinosyan accepting new patients (416) 331-9111

Dr. Rupert Abdalian
Gastroenterology

Dr. Mari Marinosyan
New Family Doctor

Dr. Omayma Fouda
Family Physician

Dr. H. Kavazanjan
Family Physician

Dr. I. Manhas
Family Physician



CASSANDRA I.D.A. PHARMACY

ARMENIAN MEDICAL CENTRE & PHARMACY

PHARMACISTS
SARKIS BALIAN, BScPhm, RPh
MARAL BALIAN, PharmD, RPh
VARTAN BALIAN, PharmD, RPh

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝
ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐ՝
ՄԱՐԱԼ ՊԱԼԵԱՆ
ՎԱՐԴԱՆ ՊԱԼԵԱՆ

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մէջ:
- Արեան ճնշման քննութիւն եւ հետեւողականութիւն՝ անվճար
- Շաքարախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցէներուն առաքելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% զեղչ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք բժիշկները տեսնել առանց ժամադրութեան:

Դիմեցէք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:

Walk-in Clinic onsite: (416) 331-9111

հասցէ՝ 2040 Victoria Park Ave. (Victoria Park & Cassandra)
 Toronto, Ontario M1R 1V2 Tel: (416) 449-2040 Fax: (416) 449-2048






Ghadir
 Meat & Restaurant


Մեր յարգյալ յաճախորդներուն կը տեղեկացնենք, թէ GHA DIR մտափաճառատու են ու ճաշարանի փոխադրուած 1, առկի բնդարձակ և յարմարաւէտ կէտքոն ուր՝ նորագոյն եւ լաւագոյն ձևով ծառայելու մեր յաճախորդներու և:

Մեր ճաշարանէն ներս կը սպասարկուին միջին արևելեան գանձազան ճաշատեսակներ, օրինակ՝ մենէիշ, պանիրով պեթրէկ, հաւու եւ կովու միսով շաուրմա, հաւու եւ կովու միսով խորոված, մաաշոթ, չի բօֆթ, լման հաւու խորոված, աւճախի եւ այլ տեսակի սղանդէրներ:

ՆՈՐ ՀԱՍՅԷ՝
 1848 Lawrence Avenue East
 Scarborough, Ontario M1R 2Y4

ՀԵՌԱԶԱՅՆ՝
 (416) 750-7404 կամ (416) 750-7400





**CONNU POUR LE MEILLEUR SOUVLAKI ET GYRO EN VILLE !
KNOWN FOR THE BEST SOUVLAKI & GYRO IN TOWN!**



Special of the day with coffee and dessert
Monday to Friday \$9.95 11am – 4pm
Saturday and Sunday \$10.95 11am - 4pm
4491, boul. Samson, Chomedey, Laval
Tel: 450 681-3333

Dim. à mer. : 11h à 11h Sun. - Wed. 11am - 11pm
Jeudi à sam. : 11h à minuit Thurs. - Sat. 11am - midnight

Résidence pour
aînés autonomes
et semi-autonomes

Résidence
Certifiée

À partir de **995\$** (hors taxes)
Tous les repas, collations et supervision
médicale inclus
1½ à 4½

**Gicleurs automatiques
dans chaque appartement**

**Մեկ հոս ուրախ եք
Պրն. Իբեկեան**

**ՊԵՏԱՐԱԳ ՏԵՒԻ ԿՊՈՒՏԱԿ
ՍԵՐ ՀԱՆԳԱՏԵԱՆ ՏՈՒՆԵՆ ԵՆՈՒՄ:**

Il n'y a pas d'âge pour être heureux!

12300 boul. Laurentien, Montréal H4K 2Z6
514.335.1881 • www.manoirgouin.com

Համազգայինի Մոնթրեալի «Սանահին» մասնաճյուղի
«Պետրոս Աղաման» թատերախումբ
Թեմուրի Ուրլանցի

ԱՊԱԿԵԱՅ ԿԵՆՊԱՆԻՆԵՐ

Թարգմանություն եւ բեմադրություն՝ Կիզն Թոֆեբեքեանի

գործին անդրանիկ բեմադրությունը Մոնթրեալի մեջ
Շարաթ, 16 Սեպտեմբեր 2017, կ. ե. ժամը 8:00-ին
Կիոակի, 17 Սեպտեմբեր 2017, կ. ե. ժամը 7:00-ին
«Բաստրոմանեան» թատերասրահ
3400, rue Nadon, Montréal, Québec

Մուտքի արժեք՝ \$25 | Թուագրեալ արժույթներ՝ \$35
Տոմսեր՝ դիմել Լորայիեն (514) 856-0868, Լամ Սևանին (514) 924-9248

ՆՈՒՍՍԱՒՈՐԻՉ

ԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ



Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 10
ՍԵՊՏԵՄԲԵՐ
 SEPTEMBER / SEPTEMBRE
 YEAR / ANNÉE 1
 NO.10 2017

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ ԽԱԶԸ՝ «ՅԱՂԹՈՒԹԵԱՆ ԶԷՆՔ»



ԲԱԲԳԷՆ ԱՐԹԵՊԻՍԿՈՊՈՍ Առաջնորդ՝ Գանատայի Հայոց Թեմի

Խաչը իր նուիրականացած խորհուրդով եղած է «Յաղթության Զենք»՝ հաւատացեալը առաջնորդող դէպի յաղթանակ: Յաղթանակ՝ չարին, սատանային եւ անոր սաղրանքներուն դէմ:

Խաչի խորհուրդը ուրիշ բան չէ, եթէ ոչ կեանքի խորհրդանիշ. այլ խօսքով սպրուող սիրոյ, զոհողութեան, նուիրումի եւ մանաւանդ ինքնընծայման խորհուրդ: Անոր համար Քրիստոս կոչ ուղղեց մեզի, որ եթէ կուզենք իրեն հետեւիլ, պէտք է Իր «խաչը վերցնենք» մեր ուսերուն վրայ եւ քալենք իր բացած ճամբայէն: Քրիստոս կուզէ, որ մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք կեանք կոչուած իրականութեան վրայ, Աստուածային ճշմարտութիւններով արժեւորուած:

Այո՛, Քրիստոսի արեամբ նուիրագործուած խաչը «Յաղթության Զենք» է, որովհետեւ Ան իր անարատ բազուկները խաչին վրայ տարածելով մեզի յաղթության նշանը տուաւ, յաղթահարելու համար ամէն տեսակի դժուարութիւն եւ նեղութիւն եւ դառնալու իսկական վկաները ճշմարիտին: Ահաւասիկ թէ ինչո՛ւ այս պատիւր, մեծարանքը հանդէպ խաչին:

Հայ ժողովուրդը իր կեանքով վկայեց խաչի կեանքը, քալեց Գողգոթայի ճամբով, միշտ հաւատալով որ խաչելութիւնը սկիզբն է նոր կեանքի՝ յարուցեալ կեանքի:

Հայ եկեղեցին խաչին նուիրուած շարականներով ու աղօթքներով կը փառաբանէ խաչը՝ Խաչեալը, եւ մանաւանդ կը խնդրէ անոր զօրութիւնն ու պահպանութիւնը:

Եկէ՛ք խոնարհիմք Քրիստոսի Խաչին առջեւ եւ հաւատանք, որ Իր խաչը մեզի՝ հաւատացեալներուս համար մնայուն ապաւենն է, զօրութեան աղբիւր է եւ մանաւանդ «ՅԱՂԹՈՒԹԵԱՆ ԶԷՆՔ» է:



ՏՕՆ Ս. ԳԷՈՐԳ ԶՕՐԱՎԱՐԻ

Ս. Գէորգը քաջ եւ հմուտ զօրավար էր: Ան կը սիրէր զԱստուած եւ բարեխղճօրէն կը կատարէր Տիրոջ բոլոր պատուիրանները: Դիոկղետիանոս հեթանոս կայսրը, երբ հրովարտակ մը հրապարակեց, անոր մէջ գրուած էր. «Չարաչար մահով կը սպաննուին բոլոր անոնք, որոնք չեն պաշտեր եւ զոհեր չեն կատարեր կուռքերուն», թագաւորական այս հրամանը կախեցին հրապարակներու վրայ՝ ի գիտութիւն քրիստոնէաներուն: Սակայն Գէորգ զօրավարը, որ անվախ էր եւ աստուածապաշտ, առանց վախնալու պատռեց արքունական հրովարտակը եւ քաջալերելով միւս քրիստոնէաները՝ ըսաւ. «Մի՛ վախնաք, որովհետեւ Աստուած երբեք չի լքեր իրեն հաւատացողները»:

Քաջ զօրավարը գնաց թագաւորական պալատ, կանգնեցաւ Դիոկղետիանոսի առջեւ եւ համարձակօրէն ըսաւ. «Հրաժարեցէ՛ք ձեր պիղծ կուռքերը պաշտելէ եւ ճանչցէ՛ք ճշմարիտ Աստուածը, Ան՝ որ Արարիչն է երկնքի ու երկրի»:

Մոլեգնած թագաւորը հրամայեց հրապարակի վրայ կախել եւ տեղով խցել Գէորգ զօրավարը: Բայց երբ զինուորները մօտեցան կատարելու թագաւորին հրամանը, տեղը ծալլուեցաւ եւ չվասեց քաջ զօրավարին: Անոնք որոնք ականատես եղան այդ հրաշքին, հաւատացին Քրիստոսի զօրութեան:

Չայրացած թագաւորը հրամայեց բանտ նետել զօրավարը եւ ենթարկել մահացու տանջանքներու: Այդ պահուն երկինքը որոտաց, եւ ձայն մը ըսաւ. «Քաջալերուէ՛, Գէորգ, որովհետեւ քու Փրկիչդ պիտի զօրացնէ քեզ»:


Զինուորները ձերբակալեցին բոլորը եւ տարին քաղաքէն դուրս: Ս. Գէորգը աղօթեց, որ հեթանոսները հաւատքի գան եւ ճանչնան ճշմարիտ Աստուածը, ապա հպարտ ու անվախ ըսաւ. «Կատարեցէ՛ք ձեր թագաւորին հրամանը»:

Այս ձայնին հետ Աստուծոյ հրեշտակը իջաւ երկինքէն եւ ազատեց սուրբը տանջանքներէն: Այնտեղ եղած մարդիկ եւս, տեսնելով հրեշտակը, հաւատացին Քրիստոսի զօրութեան:

Ս. Գէորգի որոշ մասունքներ տեղափոխուած են Հայաստան, անոնց վրայ կառուցուած են սուրբին անունը կրող եկեղեցիներ, որոնք ուխտատեղիներ դարձած են հաւատացեալներու համար: (յատկապէս Մուղնիի Մուրբ Գէորգը), եւ ուր տարին անգամ մը սուրբի տօնին մեծ ուխտագնացութիւն կը կատարուի:

Ս. Գէորգը, ինչպէս նաեւ այլ սուրբ զինուորներ, ընդհանրապէս կը պատկերացուին ձիու վրայ նստած եւ տեղով մեծ վիշապ մը սպաննող: Այս վիշապը կը խորհրդանշէ սատանան եւ չար ուժերը:

ՄԻՇՏ ԱՂՕԹԵՆՔ



Միրող եւ ողորմած Աստուած, Օգնէ մեր համայնքի իւրաքանչիւր ընտանիքին, որպէսզի իրենց հաւատքը ապրին իրարու եւ ուրիշներու հանդէպ կարեկցանք ցոյց տալով. լսէ՛ մեր աղօթքը, ո՛վ Աստուած:

Օգնէ իւրաքանչիւրին, որ բարութիւն ցոյց տայ ուրիշին եւ բոլոր անոնց, որոնց կը հանդիպի. լսէ՛ մեր աղօթքը, ո՛վ Աստուած:

Օգնէ, որ մեր ընտանիքները զիտակից խոնարհութեամբ Քու փառքը ու մեծութիւնդ յիշեն. լսէ՛ մեր աղօթքը, ո՛վ Աստուած:

Օգնէ, որ մեր ընտանիքները հեզութիւն տրվին, միշտ Քեզի փառք տալով. լսէ՛ մեր աղօթքը, ո՛վ Աստուած:

Օգնէ, որ մեր ընտանիքները իւրաքանչիւր հարազատի նկատմամբ համբերութիւն ցուցաբերեն. լսէ՛ մեր աղօթքը, ո՛վ Աստուած:

Սակայն ամէն բանէ առաջ, իւրաքանչիւր ընտանիք օժտէ՛ Քու սիրովդ, որպէսզի անոնք կարենան այդ սերը ուրիշին արտայայտել.

Լսէ՛ մեր աղօթքը, ո՛վ Աստուած:

Ամէն:



ՀՈԳԵԻՈՐ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ



ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՎԱՐԱԳԱՅ ՍՈՒՐԲ ԽԱԶԻ ՏՕՆԸ



Վասպուրական աշխարհին մեջ կը գտնուի Վարագ գեղեցիկ լեռը: Երբ բիզանդական կայսրը սկսաւ հետապնդել Հռիփսիմեանց կոյսերը, հալածանքներէն ազատելու համար անոնք Հռոմէն փախան Հայաստան, եւ մինչ Վաղարշապատ երթալը առժամանակ փախան Վարագ լեռան լանջերուն: Ս. Հռիփսիմէն իր պարանոցին վրայ կը կրէր Քրիստոսի խաչափայտէն մատունք մը:

Գալով Հայաստան՝ կոյսերը սկսան քրիստոնէութիւն քարոզել ժողովուրդին: Սակայն այստեղ եւս անոնց դէմ հալածանքներ սկսան: Հռիփսիմէն, վախնալով որ անհաւատ բարբարոսները կը խլեն իրմէ խաչափայտի մատունքը, պահեց զայն Վարագ լեռան քարայրներէն մէկուն մէջ: Քանի մը կոյսեր քահանայի մը հետ, որպէս սպասաւորներ, փախան այդ քարայրին մէջ, իսկ Հռիփսիմէն միւս սրբուհիներուն հետ բռնեց Վաղարշապատ տանող ճամբան:

Դարեր անցան: Յայտնի չէր խաչափայտին մատունքին վայրը: Վարագ լեռան վրայ ճգնող Թողիկ վանականը եւ անոր աշակերտ Յովելը օր ու գիշեր ծնկաչոք կ'աղօթէին եւ կը խնդրէին Տիրոջմէ, որ արժանի դարձնէ զիրենք գտնելու եւ համբուրելու սուրբ մատունքը: Աստուած լսեց անոնց խնդրանքը: Երկինքէն ձայն մը լսուեցաւ, յետոյ Վարագայ լեռան վրայ երեցաւ լուսափայլ խաչ մը, եւ 12 լուսեղէն սիւներ իջան երկինքէն շողացող խաչէն: Լոյսերը երկար ժամանակ շողացին լեռան վրայ, յետոյ երկինքէն իջնելով շողացին եկեղեցոյ Ս. Մեղանին վրայ, ուր կը գտնուէր սուրբ մատունքը: Վանահայրն ու իր աշակերտը լոյսին հետեւելով մտան եկեղեցի, ծունկի եկան Ս. Մեղանին առջեւ եւ երկրպագեցին Աստուծոյ: Մարդիկ հեռուէն տեսան լոյսը եւ շտապեցին եկեղեցի: Եկաւ նաեւ Ներսէս Կաթողիկոսը՝ հոգեւոր դասին հետ: Այդպէս հաստատուեցաւ Վարագայ Խաչի տօնը:

Մեծ տօնախմբութիւն կազմակերպեցին լոյսին երեւման տեղը, ուր Ս. Նշան եկեղեցին կառուցեցին: Իսկ այն եկեղեցին, ուր յայտնաբերուած էր սուրբ մատունքը, ընդարձակեցին եւ աւելի փառաւոր դարձուցին:

Վարագայ Խաչի տօնը կը կատարուի Խաչվերացին յաջորդող երկրորդ Կիրակի օրը:



ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

ՏԷՐ, ԱՅՍՕՐ ՊԱՏԱՍԽԱՆԷ ԱՂՕԹՔԻՍ



Նորէն լուրիս եւ բրինձ: Չեմ այսպաներ զաւակներս, որոնք իրենց ճաշը չեն վերջացներ, մտածեցի, մինչ պնակները լուալու կը տանէի: Յոգնեցայ եւ ձանձրացայ ամէն գիշեր նոյն ճաշը ուտելէ: Բայց աժան էր եւ մեր փորը կը լեցնէր, սակայն իւրաքանչիւր տխուր ընթրիք զիս դատարկ կը զգացներ ներքնապէս:

«Տէ՛ր, իսկապէս նեղութեան մէջ ենք», աղօթեցի: «Իրական լաւ ճաշ մը կուգեմ եւ ո՛չ թէ վաղը, այլ այսօր»:

Հինգ տարի առաջ, մեր երեք փոքր զաւակներով, ամուսինիս գործին պատճառով Թեքսաս փոխադրուած էինք: Քարիւղի ընկերութիւնը, որուն մէջ կաշխատէր ամուսինս, տկարացաւ, եւ ամուսինս սկսաւ ժամանակ մը գործել հոս ու հոն: Մէկը չէի ճանչնար, որո՞ւն կրնայի դիմել օգնութեան համար: Սկսայ եկեղեցի երթալ եւ աղօթքի խմբակի մը միացայ:

«Արդեօք պարագաները պիտի բարելաւուի՞ն», կը մտածէի, «յոգնեցայ սպասելէն»: Ջղաճրգոթեամբ աղոտոտ ամանները օճառ-ջուրին մէջ դրի, «Տէ՛ր, իրական կերակուր կուգեմ, ոչ թէ վաղը, այլ այսօր, հաճի՛ս»:

«Անիմաստ բան է ըսածս», մտածեցի: «Եկեղեցիին մէջ լսեցի, որ Աստուծոյ ժամանակով կը պատասխանուին մեր աղօթքները եւ ո՛չ թէ մեր ուզած ատեն»:

Հազիւ պնակները լուացի, դուռը զարնուեցաւ: Ժամացոյցին նայեցայ, արդէն ժամը ինն է: Ո՞վ մեզ կայցելէր այսքան ուշ:

Յակոբն էր եկողը, աղօթածողովի տիկիններէն մէկուն ամուսինը: «Ներողամիտ եղէք, որ ձեզ անհանգիստ կընեմ այս ժամուն», ըսաւ ան: «Մեր աղջկան տունը ճաշի հաւաքոյթ ունէինք, որ ձեր տան մօտ է», բացատրեց ան, «շատ ճաշ աւելցաւ, եւ մտածեցինք, որ թեւերս կրնաք զանոնք օգտագործել»:

Պնակին վրայի ծածկոցը բացաւ Յակոբը, եւ ի՞նչ տեսնեմ, ահագին խորոված փափուկ միս, առաւել կանաչեղէն եւ հաց: Շշմած փափուկ, «Շատ շնորհակալ եմ: Չէք գիտեր, թէ որքա՞ն պէտք ունէի ասոր այս գիշեր», ըսի զարմացած:

«Խորհեցայ, որ վաղուան սպասելու էի, որ այս ճաշը ձեզի բերեմ, քանի որ ուշ էր», պատասխանեց մարդը, «բայց տիկինս ստիպեց ըսելով ո՛չ թէ վաղը, այլ այսօր»:

«Նեղութեան օրը ինձի կանչէ, եւ քեզ պիտի ազատեմ, ու դուն զիս պիտի փառաւորես» կըսէ Տէրը (Մաղմ. 50:15):



ՍՈՒՐԲԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ



ԱԹԱՆԱԳԻՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Մեքաստիա քաղաքին մէջ ապրող քրիստոնէայ ընտանիքի մը զաւակ եղած է Աթանագինէս Քահանան, ուր ամուսնացած եւ զաւակներու տէր դարձած էր: Անոր քոյրը՝ Մարիամ, եղած է Գրիգոր Լուսաւորիչի կինը, երբ Գրիգոր տակաւին Կեսարիա կը գտնուէր:

Աղօթքով եւ իր զաւազանով վիշապ մը սպաննելուն առ ի գնահատանք, Մեքաստիոյ մետրոպոլիտը զինք եպիսկոպոս կը ձեռնադրէ Պիտակտո քաղաքին վրայ:

Սակայն շրջանին հեթանոս դատաւորը, զինք դատի կը կանչէ եւ կը հրամայէ, որ իր աշակերտներուն հետ զոհ մատուցանէ կուռքերուն: Աթանագինէս Եպիսկոպոս կը մերժէ հնազանդիլ դատաւորին եւ կը պաշտպանէ իր հաւատքը: Դատաւորին հրամանով կը գլխատուի Ս. Աթանագինէս Եպիսկոպոսը իր տասը աշակերտներուն հետ, եւ միասնաբար կ'արժանանան երկինքի արքայութեան փառաց պսակին:



Message du Prélat

La croix – l’arme de la victoire

La signification sacrée de la croix a toujours été l’arme de la victoire; l’arme qui mène les croyants vers la victoire. C’est la victoire contre le mal, le diable et ses instigations.

La croix ne représente rien d’autre que le symbole de la vie. En d’autres mots, elle représente l’amour vivant, les sacrifices et le dévouement. C’est pour cela que Jésus nous a dit que si nous voulions Le suivre, il fallait « porter Sa croix » sur nos épaules et marcher sur le chemin qu’Il nous a ouvert. Jésus veut que nous concentrons nos énergies sur la réalité qui est notre vie, une vie remplie de révélations divines.

Oui, la Croix consacrée avec le sang de Jésus est « l’arme de la victoire » parce que Jésus, immaculé, avec ses bras étendus sur la croix, nous a transmis le signe de la victoire, pour que nous puissions surmonter toutes sortes de difficultés et détresses et pour que nous puissions devenir de vrais témoins à la vérité. Voici la raison pour cet honneur et hommage envers la croix.

À travers l’histoire, le peuple arménien a porté la croix, a marché vers Golgotha, toujours avec la foi en cœur et la conviction que la crucifixion signifie le début d’une nouvelle vie, une vie ressuscitée.

De plus, l’église arménienne, à travers ses hymnes et ses prières, a toujours rendu hommage à la croix et lui a demandé de nous donner de la force et de la protection.

Ensemble, mettons-nous à genoux devant la Croix de Jésus et mettons notre foi dans Sa Croix, parce que Sa croix est notre source de puissance, notre protection et spécialement, notre « arme de la victoire ».

Archevêque Paphen Tcharian



Exaltation of the Holy Cross (Khachverats)

Khachverats celebrates in commemoration of the return and the glorification of the Holy Cross. The Armenian Church celebrates it on Sunday, falling in the interval between 11th and 17th of September. The Monday after Holiday is the Day of commemoration of the dead.

According to legend, the first bishop of Jerusalem, James, the brother of the Lord, found a particle of the Cross of Christ, raised it high, manifesting to the believers and singing sharakan (gospels); «Thy Cross, O Christ, we worship.» Another legend says that the Holy Cross, which was found by the Queen Helena (the mother of Emperor Constantine the Great) was built up by the Jerusalem’s first Patriarch Macarius over the gathered, so they beheld and worshiped it (326).

In 335, the Emperor Constantine built the church “Holy Resurrection” (St. Harutiun) on the burial place of Christ. The church was consecrated on 13th of September, and after that each year was celebrated the consecration of the temple; the festival was lasting eight days. On September the 14th people gathered at Calvary, where the Holy Cross was erected in sight of all the faithful for the worship of the congregation.

Feast of the Exaltation of the Cross has become even more important after the return of the Holy Cross from the Persian captivity in the first half of VII century. In 610 the Persian king Khosrov with a large army attacked the Byzantine Empire. Inspired by the first victories the Persians captured Jerusalem and took the Cross of Christ Tree (614). Many were put to the torch and sword or were taken prisoners. Among them was also the patriarch of Jerusalem, Zechariah.

After years of war the Byzantines, led by the Emperor Heraclius, defeated the Persians and freed the Holy Cross (628g.). In these events, also participated the Armenian troops led by the ruler of Armenian Byzantium Mzhez Gnumi. The freed Wood of the Cross was solemnly transferred through Armenia to Constantinople and then to Jerusalem maintained by possesses and services in churches.


A Cross for Christians is a symbol of pride and power of God, where was shed the innocent blood of Christ. Jesus on the cross demonstrated His unconditional love for people, and the Cross for Christians became a pledge of hope, love and salvation.



"Saint George (ca. 275/281 – 23 April 303) was, according to tradition, a Roman soldier and priest in the Guard of Diocletian, who is venerated as a Christian martyr. In hagiography Saint George is one of the most venerated saints in the Roman Catholic Church, Anglican Church, Eastern Orthodox Church, Oriental Orthodox Church, and the Eastern Catholic Churches. He is immortalized in the tale of Saint George and the Dragon and is one of the Fourteen Holy Helpers. His memorial is celebrated on 23 April, and he is regarded as one of the most prominent military saints.

Many Patronages of Saint George exist around the world, including: Aragon, Catalonia, England, Ethiopia, Georgia, Greece, Lithuania, Palestine, Portugal, and Russia, as well as the cities of Amersfoort, Beirut, Fakiha, Bteghrine, Cáceres (Spain), Ferrara, Freiburg, Ljubljana, Pomorie, Preston, Qormi, Rio de Janeiro, Lod, Barcelona, Moscow, Tamworth and the Maltese island of Gozo, as well as a wide range of professions, organizations, and disease sufferers."

"Strange that a third century Armenian saint would have such popular appeal in western Europe. Saint George (Sant Jordi in Catalan, San Jorge in Spanish) is revered as the patron saint of Catalonia and Aragon, as well as England, Greece, Portugal and Russia. While little is known of the life of the martyr saint, he has come to represent the triumph of good over evil. It is believed that Saint George was a Roman soldier who converted to Christianity, and gave away his possessions to the poor to become a preacher. As a member of an illegal sect, George was taken by the Roman authorities to Lod, a town in modern Israel, where he was tortured and later put to death. Within a hundred years a cult dedicated to Saint George existed. The characteristics shown by the saint, conviction, faith and an evangelising message gave him popular appeal, around which grew legends like the slaying of the dragon."





ՈՒՄԱՒՈՐԻՉ

ԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

Եւ ի՞նչ է մեր համայնքին ինքնութիւնը: Մեր համայնքին ինքնութիւնը մեր ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ինքնութիւնն է:

Վերադառնալով վերանորոգումի պարտեզի օրինակին, մեր համայնքին համար ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ինքնութեամբ ծառեր պէտք է տնկուին...: Սակայն ծառ տնկելը չի բաւեր: Հաւանաբար, պէտք է 5 տարի սպասել, ջրել, խնամել ծառը, որպէսզի սկսի պտուղ տալ... անխնամ թողուած ծառը պտուղ պիտի չտայ, որովհետեւ պիտի որդնտի...:

Ծառերը ջրելու եւ հոգ տանելու փոխաբերական իմաստը մանուկին դաստիարակութիւնն է:

Կիրակնօրեայ դպրոցին նպատակն է.

Ա. Հայաստանեայց Եկեղեցւոյ դաստիարակութեան եւ աւանդութեան համաձայն կրօնական դաստիարակութիւն տալ մասնաւորապէս մանուկներուն եւ պատանիներուն, իբրեւ լրացուցիչ մասը ազգային ընդհանուր կրթութեան եւ դաստիարակութեան, եւ ընդհանրապէս ալ չափահասներուն աւանդել քրիստոնէութեան եւ Մայրենի Եկեղեցւոյ վերաբերեալ գիտելիքներ եւ ծանօթութիւններ:

Բ. Այս դաստիարակութեան նպատակն է Հայ ժողովուրդին զաւակները գիտակից ընել իրենց Քրիստոնէական Կրօնքին եւ Մայրենի Եկեղեցւոյն եւ կերտել անոնց քաղաքացիական նկարագիրը:

Վերջ ի վերջոյ, եթէ մեր համայնքի պարտեզին մէջ Հայ Քրիստոնէայ գիտակցութեամբ ապագայի սերունդ չպատրաստենք, այն ատեն, որպէս համայնք չենք կրնար մեր ՀԱՅ Քրիստոնէայ նպատակին եւ ՀԱՅ Քրիստոնէայ կոչումին հաւատարիմ մնալ: Կրնանք մնալ համայնք, որոշ ժամանակի մը համար, սակայն անխարխիլ, ալիքներուն քմահաճոյքին ձգուած: Եւ եթէ մեր Հայ Քրիստոնէութիւնը պիտի պահենք եւ մեր համայնքը վերանորոգենք, մեր մանուկները այնպէս պէտք է դաստիարակել, որպէսզի անոնք սորվին խաչ հանել եւ գիտնան, թէ պէտք է ապրին

այդ խաչով, սորվին աղօթքներ եւ աղօթել, որպէսզի կարենան շողկապել իրենք զիրենք Վարդանանց, Մեսրոպ Մաշտոցի եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի հետ:

Գիտնան Հայ բարքերու եւ կենցաղի մասին եւ մաս դարձնեն զանոնք իրենց առօրեային:

Մեր մանուկները այնպէս պէտք է դաստիարակել, որպէսզի անոնք քաջածանօթ ըլլան Հայկական սովորութիւններու:


Գարենան հայերէն Աստուածաշունչ բանալ եւ կարդալ, որպէսզի լիիրաւ մասնակցին Ձինուորեալ Եկեղեցւոյ կեանքին: Գիտնան Հայ Սուրբերու մասին եւ կապի մէջ ըլլան Յաղթական Եկեղեցւոյ հետ: Տօնէն Հայկական տօները... Գիտնան, թէ ինչի՞ կը հաւատան, երբ Հաւատամքը արտասանեն եւ Հաւատով Խոստովանիմը կարդան: Մեր մանուկները այնպէս պէտք է դաստիարակել, որպէսզի անոնք գիտնան Հայ Եկեղեցւոյ պատմութիւնը, որպէսզի գիտնան, թէ ուրկէ՞ կու գան եւ ո՞ւր կ'երթան: Գիտնան Հայ Եկեղեցւոյ Տաղաւարները եւ կարենան ունկնդրել եւ մասնակցիլ մեր շարականներու երգեցողութեան:

Մեր մանուկները պէտք է դաստիարակուին այս ձեւով, իրենց Հայ Քրիստոնէայ ինքնութիւնը շեշտելու եւ իրենց նկարագիրը կերտելու համար, եւ մենք այս բոլորին է, որ կը ձգտինք մեր Կիրակնօրեայ Դպրոցներուն մէջ:

Այս տարի վերանորոգումի տարի է, սակայն հարցը վերանորոգումը չէ, որովհետեւ վերանորոգումի պէտքը տուեալ է (it's a given): Հարցը, վերանորոգումի որակը, եղանակը, չափն ու կշիռը ճշդելն է: Ի՞նչ որակով պիտի վերանորոգենք այն, ինչ որ ժառանգած ենք, ի՞նչ պրագութեամբ կրնանք վերանորոգել եւ ... ի՞նչ եղանակով պիտի վերանորոգենք եւ որչա՞փ ճիգ եւ կարողութիւն պատրաստենք տրամադրելու այս վերանորոգման աշխատանքին, մեր Հայ Քրիստոնէայ ապագային համար, որ կը սկսի մեր այսօրուան մանուկներու դաստիարակութեամբ:

Թորոս Պապիկեան (Վերջ)

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ



ՅԻՍՈՒՍ ԿՈՅՐ ՄԸ ԿԸ ԲԺՇԿԷ



22 Ապա Բեթսայիդա եկան: Հոն Յիսուսի բերին կոյր մը եւ կ'աղաչէին իրեն որ դպչի անոր: 23 Յիսուս կոյրին ձեռքը բռնելով՝ զայն գիւղէն դուրս հանեց, թուրով թրջեց անոր աչքերը եւ ապա ձեռքով դպաւ անոր աչքերուն եւ հարցուց.
- Բան մը կը տեսնե՞ս:
24 Անիկա աչքերը բացաւ եւ ըսաւ.
- Մարդիկ կը տեսնեն, որոնք կարծես ծառ են, բայց կը քայլեն:
25 Յիսուս դարձեալ ձեռքերը դրաւ անոր աչքերուն վրայ: Անիկա աչքերը բացաւ, նայեցաւ եւ տեսողութիւնը վերագտնելով՝ ամէն ինչ յստակ կը տեսնէր: 26 Յիսուս տուն դրկեց եւ ըսաւ.
- Գիւղ մի մտներ, այլ տունդ գնա: Իսկ երբ գիւղ երթաս՝ հոն ոեւէ մէկուն բան չըսես:

ՅԻՍՈՒՍ կարող էր բազմաթիւ հրաշքներ կատարել: Իր կատարած հրաշքներուն իւրաքանչիւրը մեզի ցոյց կու տայ, որ Ան Աստուծոյ Որդին է եւ ամէն բան ընելու կարող է:

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ



Երգը ե՞րբ սկսած է:

Երգի սկզբնաւորութիւնը թաղուած է պատմութեան մէջ, սակայն այսքանը յստակ է, որ աստուածապաշտութեան ընթացքին բոլոր ազգերուն մօտ երգեր եղած են: Երգը Օրհնութիւն կը կոչուի: Ինչպէս Մովսէսի երգը, որ Կարմիր Ծովէն անցնելէ ետք երգողներուն հետ երգեց, Դաւիթին Մաղմոսները, հրեշտակներուն երգը Փրկիչին ծնունդին ժամանակ, երբայեցի մանուկներուն երգը՝ Ովսաննա: Այս ամէնը ցոյց կու տան Քրիստոսի եկեղեցիին մէջ երգեցողութեան ծագումը: Սուրբ Պօղոս առաքեալն ալ քրիստոնէաներուն երգել կ'ուսուցանէ. «Իրարու հետ սաղմոսներով, օրհնութիւններով եւ հոգեւոր երգերով խօսեցէք եւ ձեր սիրտերուն մէջ միշտ երգեցէք ու սաղմոս ըսէք Տիրոջ» (Եփ 5.19):


Քանի՞ ձայներէ բաղկացած են երգերը:

Գլխաւոր երգերը Շարական կը կոչուին եւ ութ ձայներէ կը բաղկանան, որոնք են՝ աձ, ալ, բձ, բկ, գձ, գկ, դձ, դկ: Կայ նաեւ Ստեղի (ծանր շարականներ): Բացի ասոնցմէ, կան նաեւ յատուկ երգեր, որոնք առանձին ձայներ ունին, օրինակ՝ Գիշերային պաշտօնին (Ժամերգութեան) երգերը, Կանոնազուլիներով միասին, Թագաւորքը, Ալիւրքը, Արեւագալի երգերը եւ այլն:

Ե՞րբ սկսած է դասէ դաս երգելու սովորութիւնը:

Պլինտի ըսածին համաձայն (Գիրք Ժ., էջ 97), առաքելական դարէն սկսած երկու կողմերէն կ'երգէին: Սոկրատի ըսածին համաձայն (Գիրք Զ., Գլ. 8), այսպէս երգելու ձեւը, Անտիոքի եպիսկոպոս Սուրբ Իգնատիոս Աստուածազգեսցը (Գ. դար) սահմանած է, ինչպէս որ տեսիլքի մը մէջ տեսած է հրեշտակներուն երգելը:

Օգնէ այս կոյր մարդուն, զինք Քրիստոսի տանելով: Այս ընելու համար, դուն եւս աչքերդ գոց պահէ, մատիտ մը ձեռքդ առ եւ խնդրէ քու եղբօրմէդ, քրոջմէդ կամ հարազատներդ, որ քեզիօգնեն, գծելով հասնելու Յիսուսին:



ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ Քուրկիկ Զալալին եւ Թուր կէծակին

Այո՛, փոխուեր է ու միշտ կը փոխուի այս տարօրինակ, զարտուղի ու եզակի աշխարհը, այս «խենթ, խենթ, խենթ աշխարհը», բայց հայոց դիւցազնավէպը՝ Սասունցի Դաւիթի դիւցազնավէպը, ի գորու կը մնայ դարէ-դար:

Ընդունինք, ու շատեր տակաւին կարծէք պատրաստ չեն ընդունելու, որ աշխարհին հետ, անոր գուգահեռ թէ՛ գայն խաչածեւելով, փոխուած է ու սուրբար կը փոխուի նաեւ մեր կեանքը, մեր ազգային կեանքը:

Նոյնը չէ այսօր հայաշխարհը բաղդատմամբ երէկուան, բաղդատմամբ քառորդ դար, կէս դար, մէկ դար առաջ գոյութիւն ունեցող հայ կեանքին: Եւ կասկած չկայ, որ փոփոխութիւնը բարե՛ փոխութիւն է, յառա՛ջդիմութիւն է եւ ոչ հակառակը: Ի՞նչ կ'ուզեն՝ ըսեն յոռետեսները, ամեն բանի, ամեն կացութեան միայն վատ կողմը տեսնել ուզողները, մանաւանդ անոնք, որոնք չեն ակնկալեր, որ իրապէս բան մը կրնայ փոխուիլ, բարեփոխուիլ հայ կեանքին մէջը՝ որեւէ՛ ատենէ՛ աւելի բարւոք վիճակի մէջ ենք ներկայիս:

Ի՞նչ կենսական յառաջդիմութիւն կրնանք նշել մեր կեանքին մէջ:

Կայ, վերստին գոյ է Հայաստան անունով, սեփական՝ եռագոյն դրօշակով երկիր մը: Սեփական բանակով: Իրողապէս, եթէ ոչ տակաւին իրաւապէս ընդլայնուած սահմաններով:

Կայ բազմացած ժողովուրդ մը՝ թէկուզ գրեթէ իր երեք քառորդով ապրելով այդ սեփական երկրի Ֆիզիքական սահմաններէն դուրս, սակայն ոչ դուրս հոգեկան սահմաններէն:

Չգիտակցիլ այս իրողութեանց ու տեսնել միայն ժխտականը՝ Հայաստանի շրջափակուած ըլլալը, պատերազմական վիճակի մէջ գտնուիլը, արտագաղթը, այլազան տկարութիւններն ու թերացումները, քաղաքական, տնտեսական՝ ընկերային ախտերը եւ այլն մեզ պարզապէս յուսահատութեան ու ինքնակործանման կը տանի: Դիւրին է տեսարար դատապարտել այդ մտահոգիչ ու քայքայիչ երեւոյթներն ու ախտերը, եւ անոնք անկասկած պէտք է քննադատուին, սակայն պարզապէս խօսիլ ու բացասական տրամադրութիւններ ստեղծելը մեզ տեղ չեն հասցնել:

Մենք պարտաւոր ենք անսալ մեր դիւցազնավէպի պատգամին: Պէտք է երթանք-գտնենք Քուրկիկ Զալալին, թամբներ ու հեծններ գայն, իր պահուած տեղէն մէջտեղ հանենք ու մեր ձեռքը առնենք Թուր կէծակին ու գրոհենք մեզի սպառնացող թշնամիին վրայ:

Այսինքն գիտնանք պահի լրջութեան համաձայն վերակազմակերպել մեր կեանքը:

Մեծ եղեռնի հարիւրամեակին առթիւ հայութիւնը ցուցաբերեց աննախընթաց գիտակցութիւն մը: Պէտք է շարունակել ընթանալ այդ ուղղութեամբ: Ազգային միասնականութիւնը խօսք պէտք է մնայ:

Որքան ալ որ չունինք տակաւին այն պետութիւնը, որ դարերէ ի վեր երազեր ենք, ունինք սակայն հիմք մը, որուն վրայ պիտի բարձրանայ մեր երազած ազգային տունը: Նայինք մեր շուրջ ու դաս առնենք ուրիշներէ: Լաւագոյն օրինակը ուրիշ երազի մը իրավիճակն է: Այդ երազը կոչեր են Ամերիկայի Միացեալ Նահանգներ: Իր հիմնադրութենէն աւելի քան 240 տարի ետք տակաւին չէ՛ կայացած ան, հակառակ իր ամբողջ հարստութեան ու պատկառելի մարդուին:

Ամեն գնով պէտք է պահպանենք միասնական ոգին, ատիկա ըլլայ համահայկական առումով, թէ՛ տեղական: Այո, պէտք է որոնել ու գտնել այդ ոգին դրսեւորելու բոլոր ոլորտները, ու մեր կեանքը կազմակերպել անոր համաձայն:

Այս առաջադրանքը կը սկսի վարէն, մանաւանդ Սփիւռքի մէջ, ուր մեր համայնքային կեանքը աւելի արգիւնաւէտ ձեւով կազմակերպելու համար պէտք է գտնել բոլոր կողմերը, կողմերու կազմակերպական կարողութիւնները, ֆիզիքական



յարմարութիւններն ու մարդուժը ի մի բերելու ու անոնցմէ հաւաքաբար օգտուելու կարելիութիւնները՝ ոչ թէ՛ գանոնք իրարու մէջ ձուլելով, ոչ թէ՛ գանազան նախաձեռնութիւններ կազմակերպող պարզապէս միացեալ մարմին մը ունենալով, այլ շատ աւելի հիմնական ու տեւական համագրական ու գործակցական իրավիճակ մը յառաջացնելով: Հասկնալի է, ասիկա դիւրին ու հապճէպ իրականացուելիք բան չէ, սակայն այսօրուան ու վաղուան փոփոխութիւններուն համապատասխան ազգային կեանք մը վարելու ճամբան է: Ասիկա կը վերաբերի նաեւ Սփիւռքին՝ իբր ամբողջութիւն, կամ «սփիւռքներուն», ինչպէս կ'անուանէ գրչակիցս արտասահմանը:

Համագրային առումով ալ Սփիւռքի ձայնը Հայաստանի մէջ ու Հայաստանի ձայնը Սփիւռքի մէջ լսելի դարձնելու մասին պէտք է մտածել, եւ ասիկա ոչ միայն մեր երգիչներուն միջոցաւ... Հասկնալի է, պետութեան մը խորհրդարանին մէջ արտաքին ժողովուրդը ներկայացնելը այնքան ալ դիւրին ու պարզ միջոցառում մը չէ, բազմաթիւ բարդութիւններ կը ծագին, մանաւանդ երբ մեծամասնութիւնը դուրսն է, ո՛չ՝ ներսը: Բայց անյետաձգելի հարց է այլեւս ասիկա: Կը թուի թէ Հայրենիք-Սփիւռք յառաջիկայ հանդիպումը, որ այս օրերուն տեղի կ'ունենայ, օրակարգի վրայ նման կէտ մը ունի: Յուսանք, այդ ուղղութեամբ ալ խօսքէն անդին գործի կ'անցնինք:

Վերջապէս կայ հայութեան ամբողջական մարդուժը լաւագոյն ձեւով ազգին ի սպաս դնելու գերինդիլը: Բոլոր մարդերուն մէջ: Ամբողջ հայաշխարհի տարածքին: Այդ մարդուժը մեր մեծագոյն հարստութիւնն է: Հաւանաբար շատ այլոց նախանձը շարժելու աստիճան մե՛ծ հարստութիւն մը, որ մեզի համար անհասկնելի ներուժ կը հանդիսանայ: Պիտի գիտնա՞նք գայն գնահատել ըստ արժանւոյն: Այլեւ գինուորազրկ ի սպաս հայութեան:

Ասոնք են մեր ուժերը՝ միասնականութեան ոգին (որ կոչի Քուրկիկ Զալալի) ու մեր ներուժը (որ կոչի Թուր կէծակի):

Գոյատեւելու համար՝ լաւապէս օգտագործենք զանոնք:

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

Ghadir Meat & Restaurant

T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

BAKERY AND FINE FOODS

OPEN 7 DAYS A WEEK!
WEEKDAYS 9am - 7pm
SATURDAY 6AM - 6PM
SUNDAY 9AM - 3PM

LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST
ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN

Noor Fine Food
Gourmet Mediterranean Cuisine

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5

Tel 416 745 3111
Fax 416 745 9337

ANI Restaurant

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

Sutton

Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

Annie Varbedian
Sales Representative

Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbed@hotm.com
www.suttongroupadmiral.com

hearing aid source

Andre Ayvazyan HIS B.A.S.

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

Crown Pastries
Fine Middle Eastern Pastries

2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON. M1R 2Z5

Tel 647.351.2015
www.crownpastriesbaklava.com

I.D.A.
Part of the **Royal** family of pharmacies.

Cassandra Pharmacy Inc.

2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Tel. : **416.449.2040**
Fax: **416.449.2048**

ANI BAKERY
ԱՆԻ ՓՈԱՊԱՆ

Middle Eastern Pizza
Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8

Tel: 416.285.7164

ՈՒՆՏԻՆ ՏԱՊԱՆԱԿԸ

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

ԿԻԼԻԿԻՈՅ ԱՂԷՏԸ

3-դ

Կ. Պոլիսը թոհուրոհին մէջն էր «31 Մարտի Դէպք»ին: Եւ «ժամանակ»ը «Օսմանլը» օրաթերթի 2 Ապրիլի թիւէն առնելով՝ «Մեծ Յեղափոխութիւն Ատանայի Մէջ» վերնագրութեան ներքեւ տուած էր լուրեր: Ըստ անոնցմէ մէկուն, 31 Մարտին Ատանայի մէջ ժողովուրդը ապստամբած էր, եւ թէ ներքին Գործոց նախարարութիւնը հեռագրով յորդորած էր չյարձակիլ դրամատուններու, երեւմտական հաստատութիւններու եւ օտարներու վրայ, եւ «պէտք եղած միջոցները ձեռք առնել՝ անդորրութիւնը պահպանելու համար»»530:

Հայ օրաթերթը տեղակայուցած էր նաեւ, թէ մինչեւ 3 Ապրիլ Ատանայէն որեւէ հեռագիր չէր դրկուած Հայոց Պատրիարքարան: Եւ Պատրիարքական Տեղապահը՝ Յովհաննէս Եպս. Արշարունի531 Ատանայի Առաջնորդարան էր հեռագրած, որպէսզի «փութով իրաց վիճակին վրայ տեղեկութիւններ» փոխանցուէին:

Պատրիարքարանին գործակատարը՝ Գամէր Շիրինեան դրկուած էր ներքին Գործոց նախարարութիւն եւ «Օսմանլը» թիւը ներկայացնելով՝ լուսաբանութիւն խնդրած պատահածներուն մասին, նաեւ հարցում ուղղած թէ ինչո՞ւ հրահանգուած էր, որ միայն օտարահպատակներուն կեանքը ապահովուի, եւ թէ՛ արդեօք այդ հրահանգը միայն հայերը ջարդել կը նշանակէր: Ըստ պատասխանին, ընդհակառակը՝ հրահանգուած էր Ատանայի Կուսակալութեան, որ անմիջապէս «խնդրոյն առաջը առնէ եւ ապահովէ տեղւոյն բոլոր քրիստոնեաներուն կեանքը, ինչքը եւ պատիւը»532:

4 Ապրիլին, Արշարունի Եպիսկոպոս Բարձրագոյն Դուռն էր գացած՝ Ատանայի մասին «ստոյգ լուր մը» ունենալու համար: Վարչապետին՝ Թէյֆիք փաշայի533 հետ հանդիպման ատեն, տեղեկացած էր «Պաշարման վիճակի յայտարարութեան մասին: Ապա Վարչապետը ըսած էր, թէ «երեւցածին նայելով»՝ խնդրել հայերէն ծագում առած էր: Որուն ի պատասխան՝ Տեղապահ սրբազանը ըսած էր, թէ հեռագիրներէն իր ունեցած տպաւորութիւնը այն էր, որ հայերը ինքնապաշտպանութեան էին դիմած, «ինչպէս որ պիտի ընէր ամէն անձ», որ յարձակման կ'ենթարկուի: Յաւարտ խօսակցութեան, Վարչապետը «ազդու հրամաններ» հեռագրած էր Ատանայի Կուսակալութեան, որպէսզի

արիւնահեղութեան առաջը արագօրէն առնուի: Արշարունի Եպիսկոպոս ինքն ալ իր կարգին Ատանայի Առաջնորդարան հեռագրած էր Բ. Դրան միջոցաւ, եւ յորդորած՝ հանդարտութեան համար «վերջին ծայր» ջանք ընել, ամէն կերպով հոգ տանիլ ջարդին վերջ տալու համար534:

5 Ապրիլին, Պատրիարքութեան Ազգային երեսփոխաններ գումարուած էին Բերա535: Ժողովին հրահրուած էին Հայ Կաթողիկէ եւ Բողոքական համայնքներու ներկայացուցիչներ: Ներկաներուն հաղորդուած էր Վարչապետին հետ Տեղապահին հանդիպման մասին: Ապա կարգացուած Սահակ Կաթողիկոսի 4 Ապրիլ թուակիր թրքերէն հեռագիրը, որ թարգմանաբար կ'ըսէր. «Ամէն կողմ ընդհանուր ջարդ, հրդեհ եւ թալան. կացութիւնը (այնպէս) կը շարունակուի մինչեւ այս պահ: Միսի վրայ ալ յարձակում մը կը սպասուի. ընդհանուր յուզումը սարսափելի է: Կը խնդրուի, որ կառավարութեան մօտ միջամտելով՝ անմիջական եւ կտրուկ միջոցներով անդորրութիւնը վերահաստատել տաք եւ ժողովրդեան կեանքը ապահովէք»536:

Ժողովին ներկաներէն մէկն ալ Գրիգոր Զօհրապն էր, որ անգամ էր Օսմանական Խորհրդարանին: Ան արտաստուած էր, ըսելով. «Ատանայի մէջ, ինչպէս ուրիշ ըստ մը գաւառներու մէջ ալ, այն տեսակ կացութիւն մը ստեղծուած է, որ պատիկ կայ մը բաւական կ'ըլլայ հրդեհ առաջ բերել, ինչ որ պատահեցաւ այս անգամ (...) Լաւ կ'ըլլայ, որ Ազգին ներկայացուցիչները, կրօնականներն ալ միասին, դիմում մը ընեն Բ. Դրան մօտ, հայ Հռոմէական եւ հայ բողոքական պատուիրակներուն հետ միասին»537:

Խորհրդակցութիւններու վերջաւորութեան, բանաձեւ մը խմբագրուած էր, որ թուրքերէնի թարգմանուած եւ իւրաքանչիւր յարանուանութեան պատճէն մը յանձնուած, որպէսզի երբ Վարչապետին երթային՝ ամէն մէկը ինք փոխանցէր պատճէնին իր օրինակը: Բանաձեւին բովանդակութիւնը սա էր. «Ներկայացնելով մեր տրամադրութեան ներքեւ գտնուած հեռագիրները, խնդրել Օսմանեան Կառավարութեան» ամէն միջոց ձեռք առնել իսկոյն դադարեցնելու ջարդը, թալանը ու հրդեհը. բոլոր գաւառները կանխազգուշական հրահանգներ դրկել ազդուօրէն, հեռագրական հաղորդակցութեան միջոցները ապահովել, կարօտելոց անմիջական օգնութիւն հասցնել եւ անդորրութիւնը անմիջապէս

հաստատելու համար խառն Յանձնաժողով մը դրկել ազէտին վայրերը»538:

Ժողովական որոշմամբ կազմուած էր միացեալ պատգամաւորութիւն մը՝ Վարչապետին հետ հանդիպման համար, եւ անոր յանձնելու բանաձեւին երեք օրինակները, պատճէնը Սահակ Կաթողիկոսի հեռագրին, նաեւ Հայ Կաթողիկէ Պօղոս Պետրոս Պար. Սապպազեանի ուղղուած՝ Ատանայի Հայ Կաթողիկէ Առաջնորդ՝ Պօղոս Եպս. Թերզեանի Ֆրանսերէնով հեռագրին539, եւ յիշատակագիր մը՝ Օսմանեան Դահլիճին համար540:

Վարչապետը դժուարութեամբ բարեհաճած էր ընդունել պատգամաւորութիւնը: Խօսակցութեանց ատեն խնդրուած էր անկէ պաշտօնանկ ընել Ատանայի կուսակալը: Եւ ան պատասխանած էր, թէ արդէն կարգադրուած է կուսակալին պաշտօնանկութիւնը: Ապա ներքին Գործոց խորհրդականին հրահանգած՝ անմիջապէս հեռագրել Ատանայի Կուսակալութեան թէ՛ արիւնահեղութիւնները դադարեցնելու համար ի՞նչ միջոց որ կարելի է թող գործադրուի: Նաեւ հրահանգած՝ համիմաստ հեռագիրները դրկել Թարսուս, Մերսին եւ Մարաշ541:

6 Ապրիլին այլ ժողով մըն ալ գումարուած էր Բերայի մէջ, նախորդէն «ոչ նուազ կարեւոր»542: Անոր նախագահած էր Ամենայն Հայոց ընտրեալ Կաթողիկոսը՝ Մատթէոս Իգմիրլեան543: Ժողովը յանգած էր այն որոշման, թէ «Ազգին կողմէ պատգամաւորութիւն մը» պէտք է դրկել շուտով՝ «նպաստ բաշխելու արկածեալներուն եւ զանոնք պիտիելու»544, նաեւ քննելու եղածը545: Այն գործին համար նշանակուած էին Գէորգ Վրդ. Սարսուսեան եւ Ազգային Երեւոյնի Սարգիս Սուրի546:

Ժողովը Հայրապետին թիւղաբով հեռագրին ներ ուղղած էր «բոլոր գաւառային Առաջնորդութեանց» գիտնալու համար, թէ ապահովութեան մէջ են»547: Եւ նախքան փակուիլը՝ յարմար տեսնուած էր, որ ծառն ժողովի Դիւանները եւ Ազգային ժողովին Մայր Դիւանը «ամէն առտու մէկ երկու ժամ գումարուին (...) օրուան կացութեան հետեւելու համար եւ որոշումներ տալու»548:

Յաջորդ օրը՝ 7 Ապրիլին իր եկեղեցականներով անշարժութեան մատնուած Սահակ Կաթողիկոսէ Պատրիարքարան հասած էր տագնապալի այլ հեռագիր մը, որ կ'ըսէր. «Ամէն կողմերնիս արիւնի ու կրակի մէջ ենք: Փճացանք: Միս քաղաքն ալ բնաջինջ եղաւ, ընտանիքներ, մեծ ու պզտիկ, Մայրավանքը ապաստանած են: Եթէ ժողովրդեան կեանքը փրկելու համար կտրուկ եւ ստիպողական միջոցներու չի ձեռնարկուին՝ մենք ալ ամբողջութեամբ պիտի փճանանք»549:

Պատրիարքարանը թագրիր մը պատրաստած էր եւ հեռագրել ներփա-

կելով անոր մէջ Բ. Դուռն առաքած՝ «ազդու տնօրինութիւններ» պահանջելով՝ «յարաճուն ազէտին առաջը առնելու համար այլեւս»550:

ԳԱՌՆԻԿ Ա. Ք. Գ.

ԱՂԻԻԻՐՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

530.- Ժկ, «Մեծ Յեղափոխութիւն Ատանայի Մէջ», 3-16 Ապրիլ 1909, է 3:
531.- Յովհաննէս Եպս. Արշարունի 11 Փետրուար 1909-ին ընտրուեցաւ Տեղապահ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան: Իբր Պատրիարք Աթոռին վրայ պիտի ըլլար 1912-1913:

532.- Ժկ, «Մեծ Յեղափոխութիւն Ատանայի Մէջ», 3-16 Ապրիլ 1909, է 3:
533.- 31 Մարտի շարժումին հետ Հիլմի փաշայի դահլիճը կ'իյնար, եւ կը կազմուէր Թէյֆիք փաշայի վարչապետութեամբ դահլիճը, որ շաբթուայ մը կեանք պիտի ունենար:

534.- Ժկ, Հայկական Լուրեր, 5-18 Ապրիլ 1909, է 3:
535.- Ժկ, Ջարդ, Թալան, Հրդեհ Ատանայի Մէջ/Վատնագր Կր Սպառնայ Նաեւ Միսի, 6-19 Ապրիլ 1909, է 2:
536.- Անդ:
537.- Անդ:
538.- Անդ:

539.- Հայ Կաթողիկէ Առաջնորդին հեռագիրը. «Երեք օր շարունակ քրիստոնեայ ժողովուրդը խժոժաբար խողխողուեցաւ, թալուեցաւ. ահագին հրդեհ եւ անձի կորուստ. թեմին ժողովուրդը ահաբեկած է ու անօթի. մեր վանքի ազարակին դիւղը բոլորովին բնաջինջ եղած է: Ընդհանուր վիճակնիս յուսահատական է, օգնութիւն հասցուցէք: Նոյն տագնապալի կացութիւնը նաեւ Թարսուսի, Միսի մէջ եւ ամենուրեք»:

Այս հեռագիրն ալ կարգացուած էր Բերայի ժողովին: Անդ:

540.- Անդ:
541.- Ժկ, Ատանայի Ողբալի Դէպքերը/Խառն ժողովին Երէկուան Նիստը, 7-20 Ապրիլ 1909, է 1:
542.- Անդ:

543.- Մատթէոս Պար. Իգմիրլեան Ամենայն Հայոց Աթոռին ընտրուեցաւ 1 Նոյեմբեր 1908-ին: Չարէն վաւերացման հեռագիրը 7 Ապրիլ 1909-ի թուականով է: Ընտրութեանէն ետք, ան մնաց Օսմանեան մայրաքաղաքին մէջ: Ընդհանրապէս մեկնեցաւ 22 Մայիսին:

544.- Ժկ, Ատանայի Ողբալի Դէպքերը/Խառն ժողովին Երէկուան Նիստը, 7-20 Ապրիլ 1909, է 1:
545.- Անդ:
546.- Անդ:
547.- Անդ:
548.- Անդ:

549.- Ժկ, Հայկական Լուրեր, Նոր Եւ Ազէտալի Հեռագիր, 9-22 Ապրիլ 1909, է 3:
550.- Անդ:



ՀՕՄ-ի Սոնթրեալի ընկերային ծառայութեան գրասենեակը կ'աջակցի Գանատա ներգաղթած սուրիահայերուն

ՀՕՄ-ի Սոնթրեալի Ընկերային Ծառայութեան գրասենեակի հիմնական առաքելութիւնը Մեծ Սոնթրեալի հայութեան ընկերային կարիքներուն հասնիլն է, շեշտը դնելով կարիքաւոր անհատներու եւ ընտանիքներու վրայ: Իսկ վերջին շրջանին մեծ աշխատանք կը տարուի Գանատա նորահաստատ սուրիահայ ընտանիքներուն օգտակար հանդիսանալու համար: Մեր գործունէութիւնը կ'ընդգրկէ տեղեկատուութիւն, ներգաղթողներու աջակցութիւն, տարեցներու եւ կարիքաւորներու օժանդակութիւն.

- Կ'օգնենք դիւրացնելու անոնց համարկումը (intégration) եւ երկրի օրէնքներուն, սովորութիւններուն եւ քաղաքացիական իրաւունքներուն ու պարտաւորութիւններուն ծանօթացումը:
- Կ'ամբողջացնենք կառավարական փաստաթուղթերը դաշնակցային եւ նահանգային մակարդակներու վրայ: Allocation familiale, crédit d'impôt pour les nouveaux arrivants:
- Լորելները կ'արձանագրենք ֆրանսերէնի դասընթացներու:
- Կ'ընկերակցինք զանազան ժամադրութիւններու եւ կը միջամտենք աշխատանք գտնելու կապակցութեամբ:
- Լոր ժամանած եւ տակաւին Լոր հաստատուող ընտանիքներուն կը տրամադրենք խոհանոցային իրեր:
- La Corbeille գանատական բարեփրական կազմակերպութեան հետ յատուկ համաձայնութեամբ գեղջուած գիներով ուտեստներ կ'ապահովենք կարիքաւոր ընտանիքներուն:

Չորեքշաբթի օրերը ժամը 12:00-ն - 4:00
Հասցէ՝ 3401 Olivar Asselin, Montreal, Qc H4J 1L5
Դեռածայն՝ 514 514-335-2222


Ունկնորեցէ՛ք Գանատայի տարածքին սփռուող հայկական ռատիոժամերը՝

ՎԱՆԳՈՒԿԸ- «Armenian Variety Show» Coop Radio 100.5 FM
Երեքշաբթի երեկոները ժամը 6:00-7:00

ԹՈՐՈՆԹՕ- «Կիլիկիոյ Ձայն» CHTO AM 1690
Կիրակի երեկոները ժամը 8:00-11:00

ՄՈՆԹՐԵԱԼ- «Հայ Կեդրոնի Ձայն» 105.1 FM
Երկուշաբթի երեկոները՝ ժամը 9:30-12:00
Շաբաթ առաւօտները ժամը՝ 7:30-9:30
Կիրակի առաւօտները ժամը 7:00-8:00
«Վանայ Ձայն» 1450 AM
Երկուշաբթի երեկոները ժամը 8:00-10:00

ՀԱՄԻԼԹՆ- «Հայ Կեդրոնի» ռատիոժամ CFMU 93.3 FM
Կիրակի առաւօտեան 10:00-11:00
cfmu.mcmaster.ca



ԳՐԱԻՈՒԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԿԱԽԱՑՄԱՆ 26րդ ԱՄԵԱԿ
Կազմակերպութեամբ՝
Քեյպեգի Միացեալ Մարմնի
Շարաք, 23 Սեպտեմբեր 2017

ՄՈՆՔՐԷԱԼ

Հովանաւորութեամբ՝ ՀՅԴ Հայ Դատի Գանատայի Շրջանային յանձնախումբին, Համագային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան «Սանահին» մասնաճիւղի Գրական յանձնախումբը ձեռք կը հրաւիրէ ներկայ գտնուելու հեղինակ, լրագրող, պատմաբան եւ համալսարանական դասախօս Դոկտ. Վիգէն Զեքերեանի «Open Wounds: Armenians, Turks and a Century of Genocide» գիրքի շնորհահանդէսին, որ տեղի պիտի ունենայ Զորեքարքի 6 Սեպտեմբերի, երեկոյեան ժամը 8:00ին, Մոնթրէալի Հայ Կեդրոնի «Աւետիս Ա. Կարոնեան» սրահէն ներս:

Այս հատորով Դոկտ. Զեքերեան ջարդին մասին չէ որ կ'անդրադառնայ, այլ շեշտը կը դնէ մէկ կողմէ Թուրքիոյ ուրացման քաղաքականութեան վրայ, միւս կողմէ Թուրքիոյ բարեփոխման գործընթացի ընդմէջէն որոշ թապուններու վերացման մասին, անդրադառնալով քրտական հարցին եւ այլ պատմա-քաղաքական ոլորտներուն: Հետաքրքրական այս գիրքը, անգլերէն լեզուով ըլլալուն հիանալի քարոզչութիւն մը կը հանդիսանայ օտար հանրութեան:

Գիրքին ներկայացումը պիտի կատարուի հայերէն լեզուով, ձեռնարկին մուտքը ազատ է եւ տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւն: Կը սպասենք Ձեզ մեծ թիւով:

Համագային «Սանահին» մասնաճիւղի Գրական յանձնախումբ

ՄՈՆՔՐԷԱԼ

Հայ Օգնութեան Միութեան Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղի ձեռնարկ՝
Թէյասեղան, Հոկտեմբեր 1, 2017 կէսօրէ ետք ժամը 4:00-ին:

ՄՈՆՔՐԷԱԼ

Համագային «Թէյ, սուրճ եւ Կարծիքներ» ակումբը կը կազմակերպէ «Ժուպրան Խալիլ Ժուպրանն ու Թուրքերը»: Կը ներկայացնէ՝ Արուեստաբան Դոկտ. Մովսէս Ծիրանի Հերկէլեան հրատարակած յատկապէս Լիբանանէն: Զորեքարքի Սեպտեմբեր 13, 2017 ժամը 7:30-ին, գեղարուեստական հակիրճ յայտագիր եւ հիւրասիրութիւն: Մուտքի նուէր \$5:

«Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝

Videotron:
HD616 կամ SD16

Bell Fibe:
HD1216 կամ SD216

Շաբաթ - 08:30 (առաջին սիւրճի) եւ 1:30am
Կիրակի - 3:30pm
Երկուշաբթի - 08:00, 10:30pm, 1:30am
Երեքշաբթի - 12:00pm
Չորեքշաբթի - 6:30am եւ 7:30pm
Հինգշաբթի - 12:30pm, 12:30am
Ուրբաթ - 3pm
Ուղիղ արձակում՝ www.icitelevision.ca

Թորոնթոյի «ՆՈՐ ՀԱՅ ՀՈՐԻԶՈՆ» յայտագիրը կարելի է դիտել Շաբաթ առաւօտները ժամը 9:00-էն 10:00, իսկ Նոյն յայտագրի կրկնութիւնները Կիրակի օրերը առաւօտեան ժամը 7:00-8:00 եւ Երեքշաբթի օրերը կէսօրուայ ժամը 12:00-1:00 **OMNI 1** կայանէն:

ԳՈՐԾԻ ԱՌԻԹ
Դերձակութեան "Arthur Montreal"
հաստատութիւնը կարիքը ունի դերձակներու, կարողներու եւ ձեռողներու: Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել 514-843-0522 թիւին:

TAILORS & SHIRT MAKERS NEEDED
"Arthur Montreal" Bespoke Tailors & Shirt Makers are looking for experienced seamstress, cutters and tailors. If interested, please call 514-843-0522.

Հորիզոն
www.horizonweekly.ca

CONNECT WITH US:
facebook.com/pages/Horizonweekly
@horizonweekly

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«ՀՈՐԻԶՈՆ» որբել ձեռք կը հրաւիրէ ժամանակ պատասխանատու չէ լոյս տեսած ծանուցումներու բովանդակութեան:

«ՀՈՐԻԶՈՆ» իրաւունք ունի ընդունելու կամ մերժելու որբել ծանուցում կամ յայտարարութիւն:

ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐԸ Կ'ընդունինք միայն գրաւոր, որով խմբագրութեան պէտք է յղուին թերթի լոյս ընծայման ժամկէտէն առնուազն 7 օր առաջ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

«Հորիզոն»-ի յղուած թղթակցութիւններն ու յօդուածները պէտք է գրուած ըլլան ընթերցանի ձեւով, նախընտրաբար մեքենագրուած կամ Ե-մատակի մեր հասցէին յղուած: Անստորագիր եւ առանց հասցէի գրութիւնները մկատի չեն առնուիր: Խմբագրութեան յանձնարարութեան հիւսիսը հրատարակուի կամ ոչ, չեն վերադարձուիր:

Հրատարակուած յօդուածներու մէջ տեղ գտած կարծիքները անպայմանօրէն չեն ներկայացնէր խմբագրութեան տեսակէտը:

Յայտարարութիւնները չեն հրատարակուիր:

Բոլոր թղթակցութիւնները ենթակայ են խմբագրման եւ վերամշակման:

Ստացուած յօդուածներն ու թղթակցութիւնները հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը վերապահուած է խմբագրութեան:

SUDOKU - ՍՈՒՏՈՔՈՒ

Աստիճանաւորում՝
միջին

		8		1		
4					1	2
			3			9
6			1	4	2	9
			8	3		
1		5	9	6		8
	9			5		
2	7					1
			2		5	

horizon
HORIZON
Hebdomadaire arménien
Armenian Weekly
Publié par / Published by
Les Publications Arméniennes
(1991)
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

Abonnement annuel / Yearly subscription Canada
2^e classe - 2nd class: \$80 plus applicable taxes
1^{re} classe - 1st class: \$95
États-Unis / USA
1^{re} classe - 1st class: \$95 US
Ailleurs / Elsewhere
1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
Sylva Eshradjian-Bachekjian
(General Manager)
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail: sylva@horizonweekly.ca
Courrier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

Գրիգոր Հորոյեան, (416) 494-1921
Ժազ Վարպետեան, (416) 722-9225

Վարիչ Խմբագիր
Վահագն Գարագաշեան
Վարչական պատասխանատու
Սիլվա Պաշոյեան
Քարտուղար՝ Մարինա Տէր Խաչատուրեան
Աագ խմբագիր
Վրէժ-Արմէն Արքիմեան
Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Արքա-համեան, Թինա Սիլվեան
Չեռատրում՝ Նէնսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնիա Աճէմեան
Սոնա Թիթիզեան-Կէտիկեան

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Գարուստ Պապեան, Վազգէն Տէկիմեմբաշ,

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada

Canada

SPECIAL OFFER!

CLASSIFIED SECTION

DON'T MISS THIS OPPORTUNITY TO ADVERTISE!

NEW AT HORIZON WEEKLY!
A CLASSIFIED ADS SECTION

SPECIAL RATES! / A DISCOUNT OF 60%

Please call (514) 332-3757 to reserve your space now!



HAIG AFARIAN

Cell : 514.862-6779
Bur : 514.360.3000 ext 1234
haig.afarian@gmail.com

effectuée par
MALES ARCHITECTES-HYPOTHÉCAIRES



3310 100e Avenue, bureau 350, Laval
Québec H7T 0J7 • FAX: 514.313.5718



Groupe Sutton - Performer Inc.
123 Place Frontenac
Pointe-Claire, QC H9R 4Z7



ALBERT ARKILIANIAN
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

aarkilianian@sutton.com
Cell: 514.962.8822
Bur: 514.426.9595
Fax: 514.426.9596

Satisfaction garantie ou je revends
votre propriété gratuitement!*

*certaines conditions s'appliquent



VÉHICULES D'OCCASION
CERTIFIÉS



KEVORK ASADOURIAN
Directeur des ventes - usagé
Sales Manager - Pre-Owned

kasadourian@gabriel.ca

7000, Henri-Bourassa E., Anjou (QC), H1G 6C4
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967
www.nissangabriel.com • www.hondagabriel.com



École De Conduite
Driving School

Tel: 514-336-1110

Moniteur-Instructeur
AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II

Instruction Automatique ou manuelle



Personal & Corporate Tax Returns
Financial Statements
Bookkeeping
Business Plan

NATALIE SKAFF, CPA, CGA
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant

nat.skaff@gmail.com
Tel. (514) 963 3363
2866 Rue De Chamonix
Saint-Laurent, Québec
H4R 3B7

Services available
in Armenian, Arabic,
English and French

BRING YOUR OWN WINE



550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
Tel: 450.937.4064
Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN
450 682-1644

AUTO SAMSON



MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
SERVICE DE PNEUS MISE AU POINT

4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.




ՀԱՅԿ ԿԱՐՏՈՒՆԻԱՆ
Hayk Hartounian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

C 514.574.6162
B 514.333.3000



**NETTOYEUR
MARIE-CLAIRE**

**CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE
À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)**

2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

Linda Kharaboyan Notaire
Notary

Ձեր նոտարական և իրաւաբանական հարցերն ու ծրագիրները վստահեցե՛ք մեզի

Vos affaires. À cœur.



3111, boul. Saint-Martin O., #500
Laval (Québec) H7T 0K2
t. 450 682.5514 - 855 633.6326
linda.kharaboyan@therriencouture.com
therriencouture.com

VIZUALIS
optométriste

DR SHANT DONABEDIAN

Centre d'Achat Fairview - Fairview Mall
Pointe Claire
514 695 2555 - VIZUALIS.CA

**PHOTO
Cristal**

(514) 744 4313

Berj Merdjanian

Mariage - Portrait - Graduation
Restauration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement

Video - Reproduction

647 Boul. Decarie
VSL-Montreal QC
H4L 3L3

photocrystal@hotmail.com
www.photocrystal.com



Assura Bien inc.
Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենյակ

KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN
Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELL) • CRÉATION D'HÉRITAGE •
REER FERR RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ •
ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE
& COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,
Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com



**TAXI
MIRABEL
450-430-2650**

Taxi Mirabel Հայկական հաստատությունը կարիքը ունի
20 հայ թարսի վարորդի Միությանը շրջանին մեջ:
Հաճեցե՛ք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիվին:

Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number,
besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**





Elie Berberian
Courtier immobilier | Real Estate Broker

C 514.519.3543
B 514.333.3000



**ONGLES CAROLE
HAMPARTSOUMIAN**

POSE D'ONGLES
RÉSINE ET POWDRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECouvreMENT SUR ONGLES
NATURELS

Առողջ եղունգներու ինձանքի համար հեռաձայնե՛ք
514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud
Montreal, QC H4J 2H6

Res: (514) 332-7021
Fax: (514) 332-7376
Cell: (514) 927-2666



krikormar@gmail.com

**FIVE STAR
ELECTRIQUE
CINQ ÉTOILES**

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL

BEDROS NALPATIAN

442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

CENTUM™
Metroapp Wealth Solutions Inc.
License # 12147

Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders

416.662.6650 cell
centum.ca/sosie_derneressian

SOSIE DERNERESSIAN
MORTGAGE AGENT
LICENCE #M12001830
716 Gordon Baker Road,
Unit 204A, Toronto
Ontario M2H 3B4

ALINE BEKEREJIAN
NOTAIRE - NOTARY

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L 1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Նոտար եւ իրաւաբանական խորհրդատու՝ Ալին Բեքերեճեան



Innovate
pour exalter



ÉQUIPÉ POUR L'ÉTÉ DE NISSAN

GRUPE NISSAN
GABRIEL

LE TOUT NOUVEAU NISSAN QASHQAI 2017

À PARTIR DE
19 998\$*

+

FRAIS DE TRANSPORT ET
AUTRES FRAIS

2 065\$*

AU TOTALE POUR LE QASHQAI S

22 063\$*



Modèle européen illustré. Le modèle canadien peut varier.

La mobilité intelligente de Nissan guide tout ce que nous faisons. Nous utilisons la technologie pour transformer les voitures en de véritables partenaires de conduite. Ensemble, les déplacements se font avec davantage de passion et de confiance, tout en étant mieux connectés. Qu'il s'agisse de voitures qui partagent la conduite avec vous ou d'autoroutes qui rechargent votre véhicule électrique pendant qu'il roule, toutes ces innovations arriveront dans un futur très proche. Et les véhicules Nissan que vous conduisez aujourd'hui offrent déjà un aperçu de ce futur.

CONSULTEZ NISSANGABRIELJEANTALON.COM OU NISSANGABRIELANJOU.COM POUR PLUS DE DÉTAILS
L'ASSOCIATION DES CONCESSIONNAIRES NISSAN DU QUÉBEC

NISSAN
GABRIEL
JEAN-TALON

3500, rue Jean-Talon O., Montréal, QC H3R 2E8
514 509-7777 | nissangabrieljeantalon.com

⟨ OUVERT LES SAMEDIS ⟩

NISSAN
GABRIEL
ANJOU

7010, boul. Henri-Bourassa E., Anjou, QC H1E 7K7
514 324-7777 | nissangabrielanjou.com

⟨ OUVERT LES SAMEDIS ⟩

*Livraison du Nissan Qashqai 2017 à partir du 5 juin 2017. Quantité limitée. Frais de transport et de préparation (1 750\$) ne sont pas inclus. Les frais de 100\$ pour le climatiseur (le cas échéant), les rabais du manufacturier et les contributions des concessionnaires sont compris. Cette offre ne peut pas être combinée à aucune autre promotion. Taxes, immatriculation, droits spécifiques sur les pneus neufs (15\$) et assurances en sus, et exigés à la signature du contrat. Certaines conditions s'appliquent. Visitez Nissan Gabriel Jean Talon pour tous les détails.



BARRY KAREN GARO
KAZANDJIAN

12325, Av. Wilfrid-Lazare
 RÉCEMMENT VENDU

3585 Elie-Audair
 À VENDRE 589 000 \$

7171, de Chateaubriand
 À VENDRE 3 950 000 \$

514
333-3000
 DEMANDEZ UNE ÉVALUATION GRATUITE

9033 Gouin
 À VENDRE 1 899 000 \$

1045 Jarry
 À VENDRE 399 900 \$

3900, rue Beaumont
 RÉCEMMENT VENDU

11805, St-Elvariste
 À VENDRE 378 000 \$

8300, Gouin O.
 RÉCEMMENT VENDU

3205 Jean-Bouliet
 À VENDRE 599 000 \$

12005, Rue Jasmin
 À VENDRE \$749 000 \$

7503-7505, Av. Champagneur
 RÉCEMMENT VENDU

131 Ch. Bates Mont-Royal
 à partir de 288 2055 +TPS/TVA

12254, rue Valmont
 À VENDRE 279 000 \$

12239 Joseph-Sauzier
 À VENDRE 998 000 \$

12280, Olivier
 RÉCEMMENT VENDU

2180 Av. Alfred-Laliberté
 À VENDRE 499 000 \$

83 des Rouseaux
 À VENDRE 1 198 000 \$

12285 Av. Martin
 À VENDRE 1 350 000 \$

1533, Boul. Alexis-Nihon
 À VENDRE 579 000 \$

1642, Mullins
 RÉCEMMENT VENDU

2233-2238, Arthur-Vaies
 RÉCEMMENT VENDU

56 des Bocages
 À VENDRE 575 000 \$

7801-7805, Av. Stuart
 À VENDRE 449 000 \$

2743, Ernest-Hemingway
 À VENDRE 849 000 \$

12207-12211, boul. Taylor
 À VENDRE 798 000 \$

7801-7805 av. Stuart
 À VENDRE 549 000 \$

1188, Ch. Lucerne
 À VENDRE 799 000 \$

EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

ÉQUIPE KAZANDJIAN .com

CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIER RE/MAX AU MONDE
 RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

KAZANDJIAN REALTY .com

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5